

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «КрТутюн» (образование) еженедельник 06.03.2024թ. չորեքշաբթի թիվ 10-11 (1139-1140)

Շնորհավո՛ր ձեր տունը, սիրելի՛ կանայք

Սովորույթի եւ ավանդույթի միջեւ

Այն, որ **Մարտի 8-ը** մայրիկների տոնն է, գիտեին խորհրդային միության բոլոր երեխաները: Եվ բոլոր հայրիկներն այդ օրը նվերներ էին գնում մայրիկների համար... **Կանանց միջազգային օրը՝** Մարտի 8-ը, նշվում էր բոլոր սոցիալիստական երկրներում եւ համարվում էր ոչ աշխատանքային օր:

«Կուլենհագենում 1910-ին կայացած սոցիալիստ կանանց միջազգային կոնֆերանսում Կլարա Ցետկինի առաջարկությամբ որոշում է ընդունվել այդուհետեւ մարտի 8-ը նշել կանանց միջազգային օր», - կարդում ենք Հայկական սովետական («կանաչ») հանրագիտարանում... Ի դեպ, **Մարիամ Աստվածածնի Ավետման** մասին այստեղ որեւէ հղում չկա:


Խորհրդային միության եւ սոցիալիստական համակարգի երկրներում 70 տարի սովորությունը ամրագրված էր բոլոր ընտանիքներում եւ Նոր տարվա տոնին համագործակցելով նշվում էր յուրատեսակ ջերմությամբ եւ շքեղությամբ: Իհարկե, շքեղությամբ զիջելով, բայց ջերմությամբ գերազանցելով խորհրդային գլխավոր Նոյեմբերյան տոնին:

Կազմակերպվեց խորհրդային Միությունը, դրանից էլ առաջ սոցիալիստական երկրների համակարգը: Հայաստանն ԱՆկախության հանրաքվեով վերհաստատեց իր ինքնիշխանությունը եւ ձեռնամուխ եղավ անկախ պետականության վերականգնմանը: Փոփոխությունները բնական, օրինաչափ եւ անհրաժեշտ էին նաեւ պետական տոնացույցում: Վերադարձվեց Մայիսի 28-ին միացան Սեպտեմբերի 21-ը, Հունիսի 5-ը... Տոնացույցում իր պատվավոր տեղը գրավեց նաեւ Ապրիլի 7-ը՝ իբրեւ կանանց, մայրության, գեղեցկության եւ սիրո տոն... Ընտրված էր Մարիամ Աստվածածնի Ավետման օրը: Սակայն 2000-ամյա ավանդույթը չկարողացավ հաղթահարել 70-ամյա սովորույթը...

Լավ էր, թե վատ, մեզանում դարձյալ Մարտի 8-ը շարունակվեց նշվել՝ որպես կանանց տոն, եւ Հայաստանի խորհրդարանը, իբրեւ կանանց պաշտոնական տոն, ինչպես խորհրդային ժամանակներում, կրկին նախընտրեց Մարտի 8-ը՝ իր նախկին ձեռնարկում: Կանանց միջազգային տոն, հայտարարելով այն ոչ աշխատանքային օր: Խորհրդարանը, միաժամանակ, տոնացույցում թողեց նաեւ **Ապրիլի 7-ը՝ իբրեւ Մայրության եւ գեղեցկության տոն**... Այդպես ծնունդ առավ «Կանանց միամսյակը»:

Լավ է, թե վատ, 70-ամյա սովորույթի եւ 2000-ամյա ավանդույթի միջեւ, դեռեւս նախապատվությունը պետականորեն առաջինին տալով, բայց նույնքան, զուգեւ եւ ավելի ջերմությամբ նշելով նաեւ երկրորդը, կանանց միամսյակին եւ ընդհանրապես տարվա բոլոր օրերին սիրով ենք մեծարում մեր կանանց, մայրերին, քույրերին եւ աղջիկներին՝ նրանց մաղթելով երջանկություն կյանքի բոլոր օրերին:

Գ.Մ.



Խոսք շնորհավորակների

Սիրելի՛ մանկավարժներ, կանայք ու աղջիկներ, Շնորհավորում են ձեզ՝ զարման գեղեցիկ տոնի առթիվ: Դուք ձեր իմաստությամբ, համբերությամբ, սիրով ու անձնուրացությամբ կրթում ու դաստիարակում եք երիտասարդ սերնդին: Բոլոր ժամանակներում էլ դժվարին է եղել ուսուցչի աշխատանքը:

Մաղթում են ձեզ առողջություն, համբերություն, բարեկեցություն, նաեւ՝ խաղաղություն հայ ազգին: Միշտ ժպտացեք գարնանային գեղեցիկ ժպտով, ապրեք գարնանային տրամադրությամբ:

Գրիգոր ՂԱՐԻՔՅԱՆ
ՀՀ ԿԳ աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ծյուղային հանրապետական միության նախագահ



Խորհրդարան

Թանգարանների ոլորտն ունի իր մայր օրերը

Ազգային ժողովի նիստում երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունվել է «Թանգարանների մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը: Այսպիսով՝ առաջին անգամ անկախ Հայաստանի Հանրապետության պատմության մեջ թանգարանների ոլորտն ունեցավ իր կարգավորող հիմնական մայր օրենքը:

Օրենքի ընդունմամբ կապահովվի մշակութային ժառանգության պահպանության եւ պաշտպանության համակարգված գործունեությունը, մշակույթի ոլորտում տնտեսական նոր մեխանիզմների զարգացումը, ինչպես նաեւ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց միջեւ ծագող հարաբերությունների կարգավորումը:

Հարունակությունը՝ էջ 3

Կառավարության որոշումով

Ստեղծվում է «Մշակույթի զարգացման» հիմնադրամ

ՀՀ կառավարության նիստում հավանության է արժանացել «Մշակույթի զարգացման» հիմնադրամ ստեղծելու եւ դրա կանոնադրությունը հաստատելու մասին որոշումը: «Մշակույթի զարգացման» հիմնադրամի ստեղծմամբ մշակույթի ոլորտում ներդրվում է կառավարման նոր համակարգ:

Հարցը գեկուցել է ՀՀ ԿԳՄ Նախարար **Ժաննա Անդրեասյանը**. «Հիմնադրամի միջոցով բարելավելու ենք ոլորտում կառավարման համակարգը. նախատեսում ենք ունենալ միասնական վարչատնտեսական կառավարման մոդել, որն առաջին փուլում կիրականացնենք թանգարանների համար: Նախագծի հաստատումը համարվում էր երկրի Ազգային ժողովի կողմից «Թանգարանների մասին» օրենքի ընդունման հետ: Առաջին անգամ անկախ Հայաստանի պատմության մեջ թանգարանների ոլորտն ունեցավ իր կարգավորող հիմնական մայր օրենքը: Սա ցույց է տալիս, որ ՀՀ մշակույթի պահպանության, զարգացման եւ հանրահռչակման 2023-2027 թթ. ռազմավարության հաստատումից հետո այս ոլորտում եւս կունկրեստ քայլերով իրականացնում ենք բարեփոխումներ: Չուզակենք ավարտում ենք միասնական տոնային համակարգի ներդրման աշխատանքները. հունիսից այն կգործարկի: Մոտ ապագայում տեսանելի կլինի երկրի տարբերությունը՝ թանգարանային ծառայությունների որակի եւ հատկապես մարքեթինգի տեսանկյունից»:

Հարունակությունը՝ էջ 3


Մշակույթի գործիչներին կտրվի դրամական խրախուսում

ՀՀ կառավարության նիստում հավանության է արժանացել «Մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների եւ մրցանակաբաշխությունների մասնակցած եւ մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին դրամական խրախուսում տրամադրելու ծրագիրը» հաստատելու մասին որոշման նախագիծը:

Հարցը գեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը**: Նրա խոսքով՝ նախագծով առաջարկվում է դրամական խրախուսում սահմանել մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոներին եւ մրցանակաբաշխություններին մասնակցած եւ մրցանակի արժանացած մշակույթի գործիչների համար:

Հարունակությունը՝ էջ 3

Գրիգ, սուր, ոգի... անմահություն



Իր քառասունամյակի առիթով ես նրան Սպարապետ եւ Մատենագիր էի մեծարել. սպարապետը Վարդան զորավարն էր կամ թերեւս Գարեգին Նժդեհը կամ զուցե Լիպարիտ Կիլիկեցին, մատենագիրն անշուշտ եղիշե Պատմիչն էր կամ թերեւս մի ուրիշը՝ ով իրենով կմարմնավորեր միատեղված զորավարին ու մատենագիրին:

Ես միշտ միտված եմ եղել Աստծուն իմ ծնողի ու իմ զավակի մեջ տեսնել եւ Ավարայրը մեր

օրերում եւ կարմիր մշուշների հեռավոր Վարդանին այսօրվա մեջ մեր կողքին տեսնել. այստեղի՛, այսօրվա՛ անօտարելի բաղադրիչներն են եւ մեր բոլոր ու բոլոր առաքինությունները, եւ բոլոր ու բոլոր արատները:

Որ մեծագիր Սպարապետը մեր օրերում մեր կողքին իրոք կայացել էր, որ համընդհանուր մենք մեզանում մեր մտից ու արյունից հունցված արտասովոր մեկն ունեինք, մեկը՝ որ օրհասի հանդիման մեր կասկածն ու տագնապը մեզմից բոլորից ամենախորն էր թաքցնում, մեկը՝ որ մեր վիատությունն ու անկման խորատի տեղ հույսի, հավատի ու վստահության բարձունք էր հառնեցնում, - այդ զգալի էր եւ իր կենարար ողջությամբ, բայց առավել քան զգալի է այսօր՝ իր սպանիչ բացակայությամբ, երբ մեր յուրաքանչյուրի ու հանուրի ընթացքին տարտան շփոթ է ներքաշվել, երբ մեր բոլորի հորիզոնը կրճատվել է ամբողջ փարսախներով, երբ այսօրվա ու վաղվա առջեւ կանգնած ենք մեր հասակների ոչ այն շիտակ պահվածքով, ինչպես կանգնած էինք կորովի իր ներկայությամբ:

Յուսամ, որ նույնիսկ նրան սպանողները, նրա անշունչ մարմնի վրա իրենց դիվային պարը պարողները այսօրվա մեր երկնքի տակ կան ոչ այն վստահությամբ, ինչպես կային իր շենշող, անգամ սպանողներին իրենց եթե ոչ կեցության հրճվածքի՝ ապա գոնե սուսական լինելության մղող ներկայությամբ. բոլոր դեպքերում նրանք ոչնչացրել են ավելին, քան իրենց նպատակի նշանը, բոլոր դեպքերում Վազգենի հեռացումով բացած վիհը ահռելիորեն մեծ է կենդանի, խլրտուն, օրավոր մեծացող Վազգենի բռնած տարածքից:

Իսկ որ այդ խլրտուն, օրավոր արագացող ու ահագնացող, իրականություն ասված թշնամու հայացքից երբեք չխուսափող, այլեւ դիմադարձող, այլեւ նախահարձակ, ամենքիս ու յուրաքանչյուրիս մեր իսկ օրվան, մեր իսկ անելիքին անակնկալ դեմ-հանդիման կանգնեցնող արտասովոր մարդը՝ իր երկրի մեծ քաղաքացին, զորավարը, քաղաքականության մարդը, պետական-ազգային գործի խոշոր անհատականությունը-կռանվել էր իր իսկ գրականության դարբնոցում, կերպավորվել էր իր իսկ կռահարմամբ՝ այդ տեսանելի է միայն հիմա՝ իր մղձավանջային, իր զառանցական կորստից հետո:

Հարունակությունը՝ էջ 8



Բելառուսի Հանրապետությունում

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Կոնյուկին:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Մշակույթի ոլորտում համագործակցության խորացման նպատակով կողմերը քննարկել են Բելառուսի Հանրապետությունում այս տարվա ապրիլին Հայաստանի Հանրապետության մշակույթի օրեր անցկացնելու առնչվող հարցեր:

Ողջունելով դեսպան Ալեքսանդր Կոնյուկին՝ Ժաննա Անդրեասյանն ընդգծել է Բելառուսի հետ բարեկամական հարաբերություններն ու հատկապես մշակույթի ոլորտում երկկողմ համագործակցությունը:

Հանդիպման ընթացքում ներկայացվել է Բելառուսի Հանրապետության մի քանի քաղաքներում ՀՀ մշակույթի օրերի անցկացման նախնական նախագիծը:

ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Կոնյուկին ժամանում է Հայաստանի Հանրապետությունում Թուրքմենստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մուհամետգեղի Այազովին:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Հայ-թուրքմենական մշակութային համագործակցության շրջանակում կողմերը քննարկել են Թուրքմենստանում Հայաստանի Հանրապետության մշակույթի օրերի անցկացման առնչվող հարցերի որոշակիորեն հստակեցնելով դրանց ժամկետներն ու նախնական նախագիծը, մասնավորապես՝ համերգների, ֆոտո եւ կինո ցուցադրությունների ձևաչափով:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է հյուրերին եւ շեշտել՝ հանդիպումը լավ առիթ է հայ-թուրքմենական բարեկամական հարաբերությունները եւս մեկ անգամ ընդգծելու եւ մշակութային համագործակցության լայն շրջանակում համատեղ անելիքները քննարկելու համար: Նախարարն ընդգծել է մշակութային առումով տարին հորելյանական է՝ առաջարկելով նաեւ այդ համատեքստում համատեղ ծրագրերի ու նախաձեռնությունների իրականացման հնարավորությունը:

Թուրքմենստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մուհամետգեղի Այազովը փոխանցել է երկրի մշակույթի նախարար Ատազելի Շամիրադովի հավաստիացումն առ այն, որ Հայաստանում Թուրքմենստանի մշակույթի օրերը կազմակերպվել են ամենաբարձր մակարդակով: Դեսպանն ընդգծել է Թուրքմենստանում Հայաստանի



տության արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Կոնյուկին ընդգծել է միջոցառումը շատ սպասված է բելառուսական կողմի համար: Նա վերահաստատել է Հայաստանի հարուստ մշակույթը բելառուս ժողովրդին հասանելի դարձնելու եւ այն լավագույնս ներկայացնելու հարցում իրենց պատրաստակամությունը:

Այցի ընթացքում նախատեսվում է նաեւ 2024-2027 թթ. մշակույթի ոլորտում համագործակցության ծրագրի ստորագրում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Բելառուսի Հանրապետության մշակույթի նախարարության միջև:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ երկկողմ հետաքրքրություններ կապակցում այլ հարցեր:

Թուրքմենստանում



մշակույթի օրերի անցկացումը շատ սպասված միջոցառում է: Նա վերահաստատել է Հայաստանի հարուստ մշակույթը թուրքմեն ժողովրդին հասանելի դարձնելու եւ այն լավագույնս ներկայացնելու հարցում իրենց պատրաստակամությունը:

Առաջարկվել է դիտարկել միջոցառումներն այս տարվա աշնան անցկացնելու հնարավորությունը:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ կրթության եւ սպորտի ոլորտներում համագործակցության լայն հնարավորությունները: Մասնավորապես՝ երկու երկրների միջեւ ավանդական բարեկամական հարաբերությունների ամրապնդման համատեքստում կարելի է միջբուհական համագործակցության կայուն զարգացման ապահովումը համատեղ կրթական հետազոտական նախագծերի, ինչպես նաեւ ուսանողների եւ դասախոսների փոխանակման ծրագրերի իրականացման միջոցով: Ընդգծվել է նա-

եւ երկու պետությունների կոնսերվատորիաների եւ տնտեսագիտական համալսարանների միջեւ համագործակցության ընդլայնումը, մշակութային եւ կրթական մի շարք միջոցառումների անցկացման կարելիությունը: Դեսպանը հետաքրքրություն է հայտնել ծանոթանալու Հայաստանի փորձին դպրոցականների շրջանում օլիմպիադայի կազմակերպման բնագավառում, որը հիմք կհանդիսանա նաեւ հետագա փոխհամագործակցության զարգացման համար:

Թուրքմենստանի արտակարգ եւ լիազոր դեսպանը տեղեկացրել է Հայաստանը կարելի ուղղություն է նաեւ տարբեր մարզաձևերի ներկայացուցիչների համար, որոնք մեր երկրում պարբերաբար կազմակերպում են ուսումնամարզական հավաքներ, մասնակցում միջազգային մրցաշարերի:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ երկուստեք հետաքրքրություններ կապակցում այլ հարցեր:

Ստեղծվում է «Մշակույթի զարգացման» հիմնադրամ

սկիզբը՝ էջ 1

Այս համատեքստում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է քաղաքականությանը և կազմակերպությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդրմանը. «Փոխել ենք մշակութային կազմակերպությունների ֆինանսավորման համակարգը, որով Կառավարությունը կրկնապատկում է մշակութային կազմակերպությունների սեփական եկամուտները: Հենց ազմակերպություններն էլ այդ գումարի շրջանակում կարող են ստեղծել խրախուսել, որպեսզի ավելի որակյալ ներկայացուցիչներ ունենան առավել հեղինակավոր արվեստագետների մասնակցությամբ: Այսպիսով՝ ավելացնելով սեփական եկամուտները՝ կառավարությունն էլ իր հերթին կրկնապատկի այն»:

Նշենք, որ մշակույթի հիմնադրամի ստեղծման նպատակներն են օժանդակել մշակույթի կառավարման արդյունավետ

գործիքակազմի ներդրմանը, աջակցել պետական մշակութային կազմակերպությունների ֆինանսական ինքնավարության խթանմանը, ենթակառուցվածքների զարգացմանն ու արդիականացմանը, իրականացնել մշակութային և ստեղծարար ոլորտների զարգացմանն ուղղված հեռանկարային ծրագրեր, ինչպես նաև նպաստել հայկական մշակույթի միջազգայնացմանը:

Կառավարման նոր մոդելով նախատեսվում է իրականացնել թանգարանների կառավարչատնտեսական համակարգում մեկ կենտրոնից եւ վարել ֆինանսական եւ անձնակազմի ներգրավման ճկուն քաղաքականություն: Նոր մոդելով նախատեսվում է նաև պահպանել թանգարանների հուշանվերային տնտեսության կազմակերպման գործընթացները՝ նպաստելով թանգարանների գիտահետազոտական աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը եւ կրթական գործունեության զարգացմանը, նոր ժամա-

նակակից ցուցադրությունների կազմակերպմանը, միաժամանակ ոլորտում տնտեսական նոր մեխանիզմների ներդրմանը:

«Մշակույթի զարգացման» հիմնադրամի հանգուցային գործառնությունից է մարքեթինգային գործունեությունը, որը կնպաստի մշակութային կազմակերպությունների ճանաչելիության բարձրացմանը, մշակութային և ստեղծարար ոլորտների զարգացմանը:

Նշենք, որ «Մշակույթի զարգացման» հիմնադրամի ստեղծման դրույթն ամրագրված է Հայաստանի Հանրապետության 2002 թ. նոյեմբերի 20-ի «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1951-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության, զարգացման եւ հանրահռչակման 2023-2027 թվականների ռազմավարությունում»:

Մշակույթի գործիչներին կտրվի դրամական խրախուսում

սկիզբը՝ էջ 1

Ըստ նախարարի՝ դրամական խրախուսման սահմանումը միտված է արժեւորելու մշակույթի և ստեղծարար ոլորտի ձեռքբերումները, բարձրացնելու զեղարվեստական եւ մշակութային արդյունքի ճանաչելիությունը, նպաստելու մշակույթի գործիչների համար բարենպաստ միջավայրի ձեւավորմանը, ինչպես նաև այս ոլորտում պետական խրախուսման մեխանիզմների ներդրմանը:

«Այս նոտեցման մշակումը բխում է արդեն իսկ անցյալ տարի հաստատված ՀՀ մշակույթի պահպանության, զարգացման եւ հանրահռչակման 2023-2027 թթ. ռազմավարությունից: Միջազգային հեղինակավոր ծրագրերը բազմաթիվ են. այս նախագծով ընդգրկված են ավելի քան 150 նման փառատոներ, մրցույթներ ու մրցանակաբաշխություններ: Դրանց թվին են դասվում այն միջոցառումները, որոնց ցանկը հաստատվում է ոլորտային միջազգային կազմակերպությունների կամ ասոցիացիաների կողմից: Դրա հիման վրա էլ ձեւավորվել է նախագծով հաստատվող ցանկը: Ընդ որում՝ միջազգային հեղինակավոր մրցույթները եւ փառատոները պետք է պարտադիր համապատասխանեն որոշակի չափորոշիչների միջազգային ձեւաչափ, պարբերական անցկացում, միջազգային ժյուրի եւ այն երկրի պետական աջակցություն, որտեղ դրանք անցկացվում են, ինչը լրացուցիչ ընդգծում է նաև տվյալ երկրի կառավարության կողմից այդ մրցանակաբաշխության կամ փառատոնի արեւժորումը»,- նշել է նախարարը:

Օրինակ՝ 1933 թվականին կազմավորված Կինոպրոդյուսերների ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (ՖԻԱՊՖ-ի) կողմից հաստատված հեղինակավոր Ա դասի կինոփառատոների շարքին է դասվում 51 կինոփառատոն, որոնց թվում մրցույթային եւ ոչ մրցույթային, խաղարկային եւ ոչ խաղարկային, ինչպես նաև մասնագիտացված փառատոներ: Ա դասի կինոփառատոների շարքին դասվելու համար, ըստ ՖԻԱՊՖ-ի, անհրաժեշտ է համապատասխանել որոշ



չափորոշիչների, եւ դրանք ապահովելու պարագայում միայն կինոփառատոնն ընդգրկվում է ցանկում:

Ըստ ժամանակակից մեթոդների՝ ցանկը կազմվել է այնպես, որ դրանում ընդգրկվեն տարբեր ոլորտներ՝ երաժշտարվեստ, պարարվեստ, թատերարվեստ, կինոարվեստ, կերպարվեստ, մշակութային ժառանգություն եւ գրականություն: Ներկայացված ցանկում ընդգրկված են նաև մրցանակաբաշխություններ կամ փառատոներ, որոնց պարագայում երկրի մասնակցությունը նշյալ փառատոնին արդեն իսկ հավասարազոր է հաղթանակի, ինչը մշակում է, որ ֆիլմերը կամ ներկայացումներն անցել են նախընտրական փուլը եւ ընդգրկվել փառատոնային ծրագրում: Դրամական խրախուսում տրամադրվելու է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող մշակույթի ոլորտի այն գործիչներին, որոնք որպես ՀՀ ներկայացուցիչ մասնակցել են միջազգային հեղինակավոր փառատոններին եւ մրցանակաբաշխություններին եւ արժանացել մրցանակի: Դրամական խրախուսման վճարումն իրականացվելու է ամսական պարբերականությամբ՝ մեկ տարի ժամկետով: Մեկից ավելի արդյունք ունենալու դեպքում վճարվելու է դրանցից յուրաքանչյուրի համար:

«Դրամական խրախուսման չափերը սահմանելիս հիմք է հանդիսացել սպորտի ոլորտում բարձր նվաճումներ ունեցող մարզիկների խրախուսման գործող կարգը, որով փորձել ենք ապահովել երկու ոլորտներում խրախուսման համա-

չափությունը՝ ամսական 130-ից մինչեւ 800 հազար դրամ: Դրամական խրախուսում կարող են ստանալ ինչպես անհատ արվեստագետներն ու մշակույթի գործիչները, այնպես էլ խմբերը, սակայն հետագա քննարկման կարիք ունի խմբերի պարագայում ավելի արդյունավետ խրախուսման ձեւը: Նախարարության կողմից վերջին տարիներին իրականացված վերլուծության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ խրախուսում ստացողների թիվը տարեկան կկազմի շուրջ 11 մարդ եւ 2 խումբ: Դրա համաձայն՝ ֆինանսական գնահատականով տարեկան շուրջ 85 մլն դրամ գումարի մասին է խոսքը, եւ այդ ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել ԿԳՄՍ-ին արդեն հաստկացված միջոցների շրջանակում»,- նշել է նախարարը ընդգծելով, որ որոշմամբ կարգավորվում են նաև մյուս տեխնիկական ընթացակարգերը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով հարցին, նշել է. «Արդեն բավականին երկար ժամանակ մեր մարզիկների խրախուսման մեխանիզմ ենք գործարկել եւ տեսնում ենք, որ դա որոշակի արդյունք ունենում է: Մենք հենց այն ժամանակից մտածում էինք, թե ինչ մեխանիզմներ գտնենք մշակույթի ոլորտում եւ բախվում էինք դժվարությունների, որովհետեւ սպորտի ոլորտում է մրցույթների շարքը եւ շրջանակը շատ կոնկրետ է: Մշակույթի դեպքում մենք բարդություններ ունենք. այնպես չէ, որ այդ բարդությունները լիարժեք հաղթահարված են, բայց նաև մշակույթի ոլորտում խրախուսման եւ աջակցության այդ մեխանիզմը պետք է ստեղծենք: Որոշման կանխատեսման մեջ նշված է 11 անձ եւ 2 կոլեկտիվ, սակայն սա նախնական դիտարկում է: Մենք ցանկանում ենք, որ խրախուսվեն ավելի շատ կոլեկտիվներ ու անձեր: Այս ամենը կխթանի մշակույթի զարգացմանը եւ որպես մշակույթ, եւ որպես տնտեսության ճյուղ, եւ որպես հանրային կյանքում առավել տեսանելի գործոն՝ հանրային խնդիրների քննարկման հարթակ դառնալու տրամաբանությամբ»:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թանգարանների ոլորտն ունի իր մայր օրենքը

սկիզբը՝ էջ 1

Օրենսդրական փաթեթի մշակումը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» կատարմամբ, ինչպես նաև ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի ճանապարհային քարտեզի միջոցառումների կատարման պահանջով:



«Թանգարանների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է թանգարանների գործունեության հետ կապված հարաբերությունները, սահմանում թանգարանների տեսակները, գործառնությունները, ՀՀ թանգարանային հավաքածուի ձեւավորման, համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման, անվտանգության սկզբունքները, ինչպես նաև ՀՀ թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաների եւ հավաքածուների ժամանակավոր պահպանության հանձնելու եւ արտահանման գործընթացները:

Օրենքով ամրագրվում են լիազոր պետական մարմնի լիազորությունները, թանգարանների աշխատողների իրավունքների եւ պարտականությունների, թանգարանային կրթության իրավական հիմքերը, ոչ պետական թանգարանների հավատարմագրման իրավակարգավորումները եւ համայնքային թանգարանների գործունեության սկզբունքները:

Նշենք, որ օրենքի նախագիծը մշակելու նպատակով ԿԳՄՍ նախարարության կողմից ուսումնասիրվել են թանգարանային գործուն առաջադեմ համարվող մի շարք երկրների (Կանադա, ԱՄՆ, Միացյալ Թագավորություն, Ֆրանսիա, Գերմանիա, Լատվիա, Ճապոնիա) ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերը, ինչպես նաև ԱՊՀ երկրների թանգարանային գործը կարգավորող օրենսդրությունը: Օրենքի նախագիծն էլ հիմնվել է նաև Թանգարանային միջազգային խորհրդի՝ ԻԿՕՄ-ի կողմից ընդունված Թանգարանների աշխատողների մասնագիտական վարքագծի կանոնագիրքը:

2023 թվականի հուլիսի 17-18-ը եվրոպական Միության «ԹԱՅԵՍ» տեխնիկական օժանդակության եւ տեղեկատվության փոխանակման գործիքի շրջանակում նախագիծը քննարկվել է փորձագիտական առաքելության շրջանակում:



Աշխարհի հետ

Համագործակցության նոր եզրեր՝ բարձրագույն կրթության եւ երիտասարդության ոլորտներում

Նախարար Ժաննա Անդրեասյանը ընդունել է ժողովրդավարության ազգային հիմնադրամի պատասխանատու Յան Սըքքինիթին:

Հանդիպմանը ներկա էր նաեւ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը: Հանդիպման առաջնություն երիտասարդական քաղաքականությանն ուղղված եւ բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներն էին:

Նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է հյուրին եւ կարեւորել միջազգային գործընկերների հետ համագործակցությունը ԿԳՄՍ նախարարության համակարգման ոլորտների առաջնահարկում գործում:

ԿԳՄՍ նախարարը տեղեկացրել է, որ նախարարության աջակցությամբ բազմաթիվ ծրագրեր են իրականացվում, որոնք ուղղված են երիտասարդների կարողությունների բացահայտմանը, քաղաքացիական կրթության զարգացմանը, մոր հետադարձ կապի ծրագրերի եւ այլն: Ժաննա Անդրեասյանը հատկապես ընդգծել է երի-



տասարդական կենտրոններ ստեղծելու պետական քաղաքականության կարեւորությունը: «Մինչեւ 2026 թվականը նախատեսվում է ստեղծել 25 երիտասարդական կենտրոն. արդեն ունենք գործող 4-ը՝ 33 տարբեր

մարզերում: Կենտրոնների նպատակն է՝ նպաստել մարզաբնակ երիտասարդության ներուժի բացահայտմանը, համակողմանի զարգացմանը, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպմանը: Երիտասարդական

կենտրոնը լինելու է այն միջավայրը, որտեղ երիտասարդները կարող են հանդիպել եւ քննարկել իրենց հուզող հարցերը, մոր գաղափարների իրագործման ճանապարհները: Այս համատեքստում շատ ենք կարեւորում քաղաքացիական կրթությունը»:

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաեւ ակադեմիական քաղաքի ստեղծմանը, փուլային աշխատանքներին, բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումների, կրթական ոլորտի բարելավման անհրաժեշտությամբ:

Ժողովրդավարության ազգային հիմնադրամի պատասխանատու Յան Սըքքինիթին բարձր է գնահատել ԿԳՄՍ նախարարության նախաձեռնողականությունն ու շարունակական աշխատանքները կրթական եւ երիտասարդական ոլորտներում իրականացվող բարեփոխումներում եւ դիտարկել համագործակցության հնարավորությունները:

Հանդիպմանը կողմերը քննարկել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Ռազմավարական հավակնոտ ծրագիր

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը այսօր ընդունել է Բրիտանական խորհրդի Անգլերեն գլոբալ ծրագրերի ղեկավար Մայքլ Քոնոլիի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Ադդե Հովասապիանը, ԿԳՄՍ-ի հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյանը, նախարարության այլ ներկայացուցիչներ:

Մայքլ Քոնոլին Հայաստան է ժամանել ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդրման հարցում Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի աշխատանքներին ծանոթանալու, ինչպես նաեւ «Դասավանդում հանուն հաջողության» խորագրով համաժողովին մասնակցելու նպատակով: Համաժողովին մասնակցության հայտ են ներկայացրել Երեւանի եւ 33 մարզերի՝ անգլերեն դասավանդող ավելի քան 800 ուսուցիչներ: Ընդ որում՝ հայտատուների շուրջ 50 %-ը 33 մարզերից է:

Ողջունելով հյուրերին՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը կարեւորել է երկկողմ համագործակցությունը, ինչպես նաեւ առաջիկա համաժողովի անցկացումը: «Այն երկու հիմնական ուղղությունները, որոնցով մենք համագործակցում ենք Բրիտանական խորհրդի հետ, անգլերենի ուսուցիչների կարողությունների զարգացման եւ, առհասարակ, ուսուցիչների մասնագիտական զարգացման համակարգի մշակման տեսանկյունից, մեզ համար շատ կարեւոր են: Երկու ուղղություններով էլ բա-



վականին լավ արդյունքներ ենք գրանցում»,- ասել է Արաքսիա Սվաջյանը ընդգծելով, որ Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող ծրագրերը համահունչ են «33 կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման ծրագրին»:

«33 կրթական բոլոր մակարդակներում, հատկապես հանրակրթության ոլորտում, բազմաթիվ մեծածավալ բարեփոխումներ են տեղի ունենում՝ թե՛ կրթության բովան-

դակության, թե՛ ենթակառուցվածքների, թե՛ ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացման, թե՛ դպրոցների կառավարման եւ ֆինանսական համակարգի բարելավման տեսանկյունից: Բնականաբար, լավագույն փորձի տեղայնացումը մեզ համար կարեւոր ճանապարհ է»,- նշել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար Բրիտանական խորհրդի Անգլերեն գլոբալ ծրագրերի ղեկավար Մայքլ Քոնոլին ընդգծել է Հայաստանի հետ համագործակցության հաջողված փորձը կարող է որպես մոդել դիտարկվել այլ երկրների կողմից: «Հայաստանի կառավարության եւ Բրիտանական խորհրդի միջեւ երկարամյակ տեսանկյունից համագործակցության մակարդակը լավագույն օրինակներից է, որը մենք ցանկանում ենք կիսել ամբողջ աշխարհի հետ: Հայաստանը հիանալի գործընկեր է՝ հատկապես այն առումով, որ ոչ միայն զբաղվում է կրթական բարեփոխումների մշակմամբ, այլեւ աշխատում է դրանք կյանքի կոչելու ուղղությամբ: Ընդ որում խոսքը ռազմավարական շատ հավակնոտ ծրագրի մասին է»,- ասել է Մայքլ Քոնոլին:

«Բարեվարքության դեսպանները Հայաստանում»

33 ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը ընդունել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի ներկայացուցիչներին:

Հանդիպմանը քննարկվել է ծրագրի շրջանակում նախատեսվող «Բարեվարքության դեսպանները Հայաստանում» ծրագիրը, որն իրականացվելու է «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի կողմից: Ծրագրի նպատակն է զարգացնել կոռուպցիայի կանխարգելման եւ բարեվարքության վերաբերյալ կրթությունը 33 ուսհաստատություններում՝ ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ համատեքստում:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը ողջունել է ներկաներին եւ ընդգծել ծրագրի բաղադրիչների կարեւորությունը: «ԿԳՄՍ նախարարությունը մշտապես կարեւորում է միջազգային գործընկերների հետ համագործակցությունը, որում բազմաթիվ հաջողված փորձեր կան: Այս ծրագրի իրականացման համար եւս մեր



գերատեսչությունն առաջնային շահակից գործընկեր է: ԿԳՄՍ նախարարությունը որպես լիազոր մարմին, մեծ թվով շահառուներ ունի, եւ այս համատեքստում հատկապես կարեւորում ենք բարեվարքության

մուտքը կրթական համակարգ: Կարծում ենք ծրագրի հաջողությունը նախեսառաջ կախված է կրթական խնդիրների հասցեագրումից, ընթացակարգերի բարոնեգարումից: Պայմանավորվածություն է ձեռք բերվել

ծրագիրը նախապես ներկայացնել փորձաքննության եւ երաշխավորման առաջնային համարելով դրա համապատասխանությունը կրթության ռազմավարությանն ու նախաձեռնված հիմնական ուղղություններին:

ԱՄՆ ՄՏԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի ներկայացուցիչները նշել են, որ կարեւորում են նախագծի՝ պետական քաղաքականությանը համահունչ լինելու հանգամանքը՝ որպես ճիշտ առաջընթաց ունենալու երաշխիք:

«Հայաստանի բարեվարքություն» ծրագրի շրջանակում քննարկվել են դպրոցներում ուսուցիչների եւ աշակերտների ներգրավմամբ բարեվարքության ներդրման, կոռուպցիայի կանխարգելման, բուհական բարեվարքության եւ բուհական համակարգի օրենսդրական բարեփոխումների աջակցությանը վերաբերող հարցեր:

Նախանշվել են ծրագրի մանրամասներն աշխատանքային կարգով քննարկելու անհրաժեշտությունը եւ հետագա համագործակցության հեռանկարները:

Մատենադարան - 65

Մեկնարկել է հոբելյանական միջոցառումների շարքը

Մատենադարանին Հովհաննես Երեցի ընդօրինակած Ավետարանի ընծայաբերմամբ մեկնարկել է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ հռչակվելու 65-ամյակին նվիրված միջոցառումների շարքը:

Այդ նշանակալի իրադարձությանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը**, Մատենադարանի տնօրեն **Արա Խզմայանը**, բարերարներ, Մատենադարանի տարբեր տարիների նվիրատուներ:

«Նվիրական անուններ. մատյանների տունդարձը» խորագրով ցուցադրության ընթացքում ներկայացվել են խոշոր նվիրատուների՝ Մատենադարանին ընծայաբերած ձեռագրերի, արխիվային նյութերի եւ հնատիպ գրքերի բացառիկ հավաքածուներ:

Օրվա խորհրդի ամբողջացումը նշանավորվել է եւս մեկ մեծարժեք մատյանի վերադարձով. բարերար Վահե Բաղայանը Հովհաննես Երեցի ընդօրինակած Ավետարանը ընծայաբերել է Մատենադարանին: Այս առիթով նվիրատուին շնորհվել է «Մատենադարանի բարերար» առաջին Ոսկե մեդալը, որը համեմատվել է բարերարի որդուն՝ Ռոման Բաղայանին:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը,



նը, կարելի էր Մատենադարանի նշանակությունը մեր երկրի գիտանալու համար կրթական կյանքում, ընդգծել է, որ այն մշտապես վերաբծելու անհրաժեշտություն ունի:

«Մատենադարանը, իսկապես, հավաքական ջանքի համախմբում է: Այն բազմաթիվ մարդկանց եւ նրանց նվիրումի, սրտացավության եւ հավաքչության արդյունք է: Այստեղ մեկտեղվում են պետության, անհատների, մասնավորի ջանքերը, ու սա

կարծում եմ՝ ցույց է տալիս այն նշանակությունը, որ Մատենադարանն ունի՝ կարողանալով համախմբել ու միավորել»:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ 65-ամյակը լավ առիթ է, որպեսզի հետ նայենք, հասկանանք ինչ ճանապարհ ենք անցել եւ նաեւ՝ ուր ենք գնում. «Այսօր Մատենադարանն անընդհատ հանդես է գալիս նոր նախաձեռնություններով, որով էլ ավելի է մեծանում այս կառույցի նշանակությունն ու դերը ներկա մարտահրավերների պայման-

ներում: Մատենադարանն առաջ է գնում եւ իր հետեւից տանում նաեւ այն կարելու ուղղության զարգացումը, ինչպիսին հայագիտությունն է»:

Մատենադարանի տնօրեն Արա Խզմայանն ընդգծել է՝ տարիների ընթացքում ձեռագրի նվիրաբերումը վերաճել է հայության գոյահաստատման յուրահատուկ ակտի: Նրա զննահատմամբ Մատենադարանի նվիրատուներին՝ անկախ բնակավայրից ու տարիքից, զբաղմունքից ու մասնագիտությունից՝ հոգեւորական, գիտնական, թե քաղաքական այր, միավորում է հավաքչականության բնազդն ու գիտակցումը «Մատյանի ընծայաբերումով յուրաքանչյուր հայ գիտակցաբար, թե՛ ենթագիտակցորեն, մեկտեղում է իր հոգեւոր հայրենիքի աշխարհասփյուռ բեկորները: 2023 թվականի դեկտեմբերին ՀՀ կառավարության աջակցությամբ Մատենադարանը ձեռք բերեց 1405 թվականին գրված Առբերդի Ավետարանը: Մատենադարանում աշխատող մարդու համար չկա ավելի մեծ տոն, քան մատյանի տունդարձը»:

Արա Խզմայանը նաեւ տեղեկացրել է՝ այս տարի Մատենադարանը նախատեսում է հատուկ ցուցադրություն, որտեղ կներկայացվեն վերջին մեկ տարվա արժեքավոր ձեռագրական համալրումները:

«Դասավանդում՝ հանուն հաջողության»

Համաժողով՝ անգլերենի ուսուցիչների համար

Նախարար **Ժաննա Անդրեասյանը** մասնակցել է Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի նախաձեռնած «Դասավանդում հանուն հաջողության» խորագրով երկօրյա համաժողովի բացմանը՝ նախատեսված անգլերեն դասավանդող ուսուցիչների համար:

Միջոցառմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը**, Հայաստանում Միացյալ Թագավորության փոխդեսպան **Փոլ Մորիսը**, Բրիտանական խորհրդի Անգլերեն գլոբալ ծրագրերի ղեկավար **Մայքլ Քոնոլին**:

Համաժողովին մասնակցության հայտ են ներկայացրել Երեւանի եւ ՀՀ մարզերի՝ անգլերեն դասավանդող ավելի քան 800 ուսուցիչներ. հայտատուների շուրջ 50 %-ը ՀՀ մարզերից է:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է համաժողովի մասնակիցներին եւ շնորհակալություն հայտնել ամենօրյա պատասխանատու աշխատանքի համար: Նա ընդգծել է, որ պետության համար ամենաառաջնային հարցերից է ուսուցիչների հանդեպ վարվող քաղաքականությունը՝ ապահովելու նրանց անհրաժեշտ պայմաններով, արժանապատիվ վարձատրությամբ եւ աջակցող գործիքներով՝ արդյունավետ վերապատրաստումների միջոցով:

«Տարիներ շարունակ պետությունը որոշակի ֆինանսավորում է հատկացրել վերապատրաստումների համար՝ փորձելով խրախուսել ուսուցիչների մասնագիտական զարգացումը: Այսօր ավելի քան հասունացել է այդ համակարգը փոխելու հրամայականը. չեն կարող բոլոր ուսուցիչներն անցնել նույն վերապատրաստման համակարգով, քանի որ դա արդյունավետ չէ ոչ ուսուցիչների, ոչ պետության համար,- ասել է նախարարը եւ նշել, որ դրական արդյունքը պահանջում է միասնական ջանքեր,- առաջին հերթին դուք պետք է մեզ հուշեք, թե որ ուղղություններով աջակցության կարիք ունեք, եւ մենք, որպես պետություն, պետք է մշակենք մեխանիզմներ եւ գործիքներ՝ ուսուցիչին տրամադրելու իր կարիքին համապատասխան աջակցություն»:



Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ ընթացիկ տարում կներդրվի մասնագիտական զարգացման նոր համակարգ, որի առաջամարտիկները անգլերեն դասավանդող ուսուցիչներն են լինելու:

«Շատ ոգեւորող է ձեզ այստեղ տեսնելը, ինչը ցույց է տալիս ձեր վերաբերմունքն ու սրտացավությունն աշխատանքի նկատմամբ: Այս համաժողովին ձեր ներկայությամբ դուք հնարավորություն ունեք ծանոթանալու միմյանց փորձառությանը, լսելու հաջող նախաձեռնությունների մասին եւ միասին քննարկելու, թե ինչպես դրանք կարող են կիրառել ձեր հետագա աշխատանքում: Կրթությունն ու իրենց աշխատանքը կարելի էր փոխադրելու է ներշնչում, որ ճիշտ ուղղությամբ ենք գնում եւ չհաջողելու հնարավորություն պարզապես չունենք»,- ասել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նա շնորհակալություն է հայտնել Բրիտանական խորհրդի գործընկերներին, որոնց հետեւողական աջակցությամբ ու համագործակցությամբ մշակվել է մասնագիտական աջակցության նոր հայեցակարգ: Այն, ըստ Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Արդի

Հովասափյանի, հնարավորինս հարմարեցված է կրթական ոլորտի նոր պահանջներին ու կարիքներին, լայն հնարավորություն է տալիս համակարգված իրականացնել մասնագիտական զարգացման աշխատանքներ ոչ միայն անգլերեն, այլեւ մյուս առարկաներ դասավանդող ուսուցիչներին:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն անդրադարձել է հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին՝ հատկապես շեշտադրելով ուսուցիչների մասնագիտական զարգացման մեխանիզմները, անդրադառնալով հերթական եւ կամավոր ատեստավորմանը, տարակարգի շնորհմանը:

«Շատ կարելի է այնպես փոխկապակցել հերթական եւ կամավոր ատեստավորման, տարակարգի շնորհման գործընթացները, որպեսզի դրանք միմյանց փոխլրացնեն: Անդրադառնալով տարակարգի շնորհմանը՝ պետք է ընդգծել, որ այն նախեստաջ ուսուցիչ մասնավարձական հնտությունների մասին է, ինչը միայն փաստաթղթերով հնարավոր չէ որոշել: Դրանք պետք է այնքան ինֆորմատիվ լինեն, որ գնահատող հանձնաժողովը կարողանա հասկանալ՝ ուսուցիչը գիտի՞ դասը ճիշտ պլանավորել,

կոնկրետ իրավիճակում ճիշտ կողմնորոշվել, թե՛ ոչ: Հերթական ատեստավորման համակարգում առանձնացվել է մասնագիտական զարգացման 4 մակարդակ. յուրաքանչյուր ուսուցիչ ինքն է գնահատելու իր կարիքը՝ ինքնագնահատման թերթիկը լրացնելով: Գնահատում իրականացնելու է նաեւ տնօրենը, եւ ստանալու ենք այն պատկերը, թե որ մակարդակում եւ ինչ մոդուլով է վերապատրաստվելու ուսուցիչը»,- ասել է ԿԳՄՍ փոխնախարարը: Արաքսիա Սվաջյանի տեղեկացմամբ՝ հերթական վերապատրաստման 5-ամյա ժամկետը հանվել է. սկսված ուսուցիչները մեկ տարվա ընթացքում պարտադիր պետք է վերապատրաստվեն: 2-րդ մակարդակի համար սահմանվել է 3 տարի, 3-րդ եւ 4-րդ մակարդակի համար՝ 5 տարի:

«Այս գործընթացը, որում շեշտվում են մեթոդական կարողությունները, ուղղակիորեն կապվելու է կամավոր ատեստավորման հետ, որն էլ ստուգում է ուսուցիչ մասնագիտական գիտելիքը: Ուսուցիչը, որպես կարիք, կարող է նշել առարկայական գիտելիքի վերապատրաստումը, որից հետո կմասնակցի կամավոր ատեստավորմանը»,- ասել է Արաքսիա Սվաջյանը եւ հավելել, որ աշխատանքներ են տարվում կրճատելու տարակարգի շնորհման անհրաժեշտ փաթեթը: Արաքսիա Սվաջյանն ընդգծել է, որ հերթական եւ կամավոր ատեստավորումների, տարակարգի շնորհման գործընթացներն ուղիղ փոխկապակցված են վարձատրության մեխանիզմի հետ, որն արդեն իսկ գործակալում է:

Երկօրյա համաժողովի ընթացքում պանելային համոթիպուններով քննարկվելու են մի շարք թեմաներ՝ անգլերենի զարգացման հեռանկարները, դասարաններում միջմշակութային հարադակցության զարգացումը, բառամթերքի հարստացմանն ուղղված մեթոդները, SMART նախագծերի ներառումը դասընթացում, լսումների արդյունավետության բարձրացում, ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման համաշխարհային եւ տեղական փորձի ուսումնասիրում եւ այլն:

Մարզական

Մշակույթ

Օլիմպիական խաղերի ուղեգրերի համար

Հայաստանի բռնցքամարտի կանոնադրության և տղամարդկանց հավաքականները մեկնել են Իտալիայի Բուստո Արսիզիո քաղաք, որտեղ կմասնակցեն Օլիմպիական վարկանիշային մրցաշարին:

Կարեն Աղամալյանի գլխավորությամբ Հայաստանի տղամարդկանց հավաքականի կազմում Փարիզ-2024-ի ուղեգրերի համար կայաքար են Ռուդոլֆ Գարբոյանը (51 կգ), Արթուր Բազեյանը (57 կգ), Նարեկ Հովհաննիսյանը (63,5 կգ), Գուրգեն Մադոյանը (71 կգ), Ռաֆայել Հովհաննիսյանը (80 կգ), Նարեկ Մանասյանը (92 կգ) և Դավիթ Չալոյանը (+92 կգ):

Նախապատրաստվելով Իտալիայում կայանալիք վարկանիշային մրցաշարին հայ բռնցքամարտիկները երկշաբաթյա ուսումնամարզական հավաք են անցկացրել Ծաղկաձորում, ապա նաև Օլիմպիականում, որը Կարեն Աղամալյանի փոխանցմամբ շատ արդյունավետ է անցել: «Շատ զոհ են մեր թիմի անցկացրած հավաքներից և այն եռանդից, որով տղաներն աշխատում են: Սպասում են լավ արդյունքների: Եթե յուրաքանչյուրը ցույց տա այն, ինչին ունակ է, կհասնենք մեր նպատակին: Տղաները հոգեբանորեն պետք է շատ ուժեղ լինեն, և ես հավատում եմ նրանց»:

Գերծանր քաշային Դավիթ Չալոյանը մեկ է գտնվում է գերազանց մարզավիճակում: «Լավ ենք պատրաստվել առաջիկա մրցաշարին: Մարտական ոգով գնում ենք վարկանիշի հետևից»:

Կանանց թիմի կազմում էլ ռիմգ դուրս կգան եւ Օլիմպիական խաղերի ուղեգրերի համար կայաքար են Անուշ Գրիգորյանը (50 կգ), Տաթև Խաչատրյանը (54 կգ), Էլիզա Քոչարյանը (60 կգ) և Անի Հովսեփյանը (66 կգ):

Եվրոպայի 2022 թվականի չեմպիոն Անի Հովսեփյանը փոխել է քաշային կարգն և ասում է այժմ վաղի մեծ սպասելիքներ ունի: «Օլիմպիական քաշերի հետ կապված խնդիրներ եղան ու ստիպված եղա փոխել քաշային կարգը: Կարծում եմ կհաստատվեն այս քաշային կարգում: Հիմա զարգացրել են արագությունս ու նաև հարվածներիս ուժգնությունը: Շեշտը դնելու եմ հենց արագության և հուժկու հարվածների վրա: Նպատակս Փարիզի Օլիմպիական խաղերն են: Ինձ տեսնում եմ այնտեղ»:

Կանանց հավաքականի գլխավոր մարզիչ Խաչիկ Խաչատրյանի խոսքով Ծաղկաձորում եւ Օլիմպիականում անցկացրած ուսումնամարզական հավաքների ընթացքում մարզուհիները մեծ ջանք ու եռանդ են ներդրել: «Հիանալի մարզումներ ենք անցկացրել: Բոլորը շատ լավ պատրաստ են առաջիկա վարկանիշային մրցաշարին: Սպասելիքները շատ են, հույսեր ունենք»:

Նշենք Իտալիայում կայանալիք Օլիմպիական վարկանիշային մրցաշարում տղամարդկանց 28 և կանանց 21 ուղեգրեր կխաղարկվեն:

Մնացած 51 ուղեգրերը բռնցքամարտիկների համար կվիճարկվեն արդեն Թայլանդում մայիսի 23-ից հունիսի 3-ը կայանալիք վարկանիշային մրցաշարում:

Մասնագիտական աշխատանքի որակի վկայություն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով յոթ մասնագետի տրվել են հավատարմագրման վկայագրեր մի շարք ոլորտներում մշակութային արժեքների փորձաքննությունը իրականացնելու նպատակով: Այդ ոլորտներն են՝ հայ կերպարվեստ, եվրոպական կերպարվեստ, ռուսական կերպարվեստ, դեկորատիվ-կիրառական արվեստ, սրբապատկեր, ձեռագիր ժառանգություն և տպագիր ժառանգություն:

Հավատարմագրման վկայագրերը հանդիսավոր պայմաններում հանձնել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Շնորհավորելով փորձագետներին՝ նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է. «Այս հավատարմագրերի առկայությունը ոչ միայն մասնագիտական աշխատանքի որակի վկայություն է, այլև պատասխանատվություն, որտեղ ձեր յուրաքանչյուր խոսք մեծ կշիռ է ձեռք բերում և հիմք է հանդիսանալու կարելու որոշումների համար: Հույսով ենք, որ ձեր ակտիվ մասնակցությամբ օրեցօր ոլորտը կբարելավվի, ինչը պետությանը թույլ կտա գործել ավելի թափանցիկ և ընկալելի դաշտում»: Նախարարը փորձագետներին մաղ-



թել է հաջող ընթացք և անաչառ գործունեություն:

Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է փորձաքննությունը՝ որպես առանձին բաղադրիչ կրթական գործընթաց և ներառելու անհրաժեշտությանը՝ նաև մասնագիտական կողմնորոշման տեսանկյունից:

«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Էսթեր

Աբրահամյանը ընդգծել է մեր ժամանակների հրամայականին համապատասխանող թեկնածուների մուտքը ոլորտ հնարավորություն կտա նոր իրականություն կերտելու փորձագիտական դաշտում: Հավատարմագրված փորձագետները շնորհակալություն են հայտնել վստահության համար և նշել, որ իրենց լիազորությունները կօգտագործեն հնարավորինս լիարժեք:

Բալետի արտիստների և մենեջերների հետ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանն ընդունել է 2020-2023 թթ. միջազգային մրցույթների և փառատոների դափնեկիր Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի բալետային խմբի արտիստներին և մենեջերներին:

Ողջունելով ներկաներին՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը նշել է նմանատիպ հանդիպումների նպատակը մասնագիտական նվաճումներ գրանցած անձանց խրախուսումն ու զմայախուսումն է, առկա խնդիրների վերհանումը, որը կրելու է շարունակական բնույթ:

«Պետությունը շատ է կարևորում ձեր ծավալած գործունեությունն ու ոլորտում ներդրած ջանքերը, քանի որ դուք եք մեր մշակույթի այսօրվա հիմնասյունը, և ձեր գործընթացը մեր թողած արժեքների հիմնս վրա ստեղծելով նորարար արժեքներ և ցույց տվելով մեզ առաջընթացի ճիշտ ուղղությունները, - ասել է Դանիել Դանիելյանը և հավելել, - միջազգային մրցույթներին ու փառատոներին մասնակցությամբ դուք մրցում եք ամբողջ աշխարհի հետ՝ ընդլայնելով ձեր մտահորիզոնը ու կարողությունները, հանրահռչակելով հայ կատարողական արվեստը: Դա հնարավորություն է նաև մշտապես սովորելու և ինքնակրթվելու»:



ԿԳՄՍ փոխնախարարն արտիստներին տեղեկացրել է նաև, որ Կառավարությունը վերջերս հավանության է արժանացրել «Մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին դրամական

խրախուսում տրամադրելու ծրագիրը» հաստատելու մասին որոշման նախագիծը: Նրա խոսքով՝ առաջարկվում է դրամական խրախուսում սահմանել մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոներին և մրցանակաբաշխություններին մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչների համար: Նախագծի նպատակն է արժեքները մշակույթի և ստեղծարար ոլորտի ձեռքբերումները, բարձրացնել զեղարվեստական և մշակութային արդյունքի ճանաչելիությունը, նպաստել մշակույթի գործիչների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև այս ոլորտում պետական խրախուսման մեխանիզմների ներդրումն անընդհատ:

Հանդիպմանը ներկա բալետային խմբի արտիստները և մենեջերները ներկայացրել են իրենց գործունեությունը, վերջին հաջողությունները, ինչպես նաև առաջարկներն ու իրենց մտահոգությունները ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ: Նրանք վստահություն են հայտնել, որ մասնակցելով բազմաթիվ միջազգային նախագծերի ու մրցույթների՝ շարունակելու են կատարելագործվել և հանրահռչակել հայկական մշակույթն ու արվեստը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի դրամաշնորհային ծրագրում

«Տերյան» մշակութային կենտրոնի «My way» նախագիծն արժանացել է Մշակութային բազմազանության միջազգային հիմնադրամի (IFCD) դրամաշնորհին:

Փարիզի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում անցկացվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային բազմազանության ինքնարտահայտման ձեռնարկի կոմիտեի կիրարկման միջկառավարական կոմիտեի 17-րդ նիստը, որին, որպես վերոնշյալ կոմիտեի հայաստանյան համակարգող, մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ Սվետլանա Սահակյանը:

Նիստի օրակարգում էր նաև Մշակութային բազմազանության միջազգային հիմնադրամի ներկայացված հայտերի հաստատումը:

2023-2024 թթ. Հայաստանը ներկայացրել էր երկու հայտ, որոնցից մեկը վերաբերում էր թատերահանրագիտական կազմակերպությունների միասնական տոնային տնտեսության ստեղծմանը (Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն), իսկ երկրորդը՝ հատուկ կարիքներ ունեցող մարդ-

կանց արհեստագործական արտադրության հմտությունների զարգացմանը («Տերյան» մշակութային կենտրոն):

Յուրաքանչյուր տարի հիմնադրամին հայտեր են ներկայացնում շուրջ 80 երկրի հասարակական և պետական ոչ առևտրային կազմակերպություններ: Հայտերը ներկայացվում են առցանց անմիջականորեն Մշակութային բազմազանության միջազգային հիմնադրամին, և փորձագիտական ուսումնասիրության են ենթարկվում անկախ փորձագետների կողմից:

Հայաստանի ներկայացրած հայտերը ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետների կողմից վերադարձվել էր լրամշակման: ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հայտատու կառույցներին տրվել էր ուղղորդված մեթոդական խորհրդատվություն՝ հայտերի լրամշակման վերաբերյալ: Արդյունքում «Տերյան» մշակութային կենտրոնի «My way» լրամշակված նախագիծը, ի թիվս 12 երկրների հայտերի, ներառվել է վերոնշյալ հիմնադրամի 2024 թվականի դրամաշնորհային ծրագրերում:

Նախագիծը միտված է ոչ միայն հատուկ կարիքներ ունեցող մարդկանց արհեստագործական արտադրության հմտությունների (խեցեգործություն, հագուստի տպագրություն, տեքստիլ, արհեստներ) զարգացմանը, այլև հասարակության մեջ այդ խմբերի ներդաշնակ համակեցության և մրցունակության ապահովմանը:

Նախագծի շրջանակում կստեղծվի միջազգային առցանց շուկա մուտք գործելու մասնագիտական վեբկայք՝ նախատեսված հատուկ կարիքներ ունեցող մարդկանց և արտադրության մեջ ներգրավված հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ստեղծված մշակութային բարիքների առաջընթացը: Նախագծի տեղադրությունը 17 ամիս է:

Ծրագրի իրականացման համար Մշակութային բազմազանության միջազգային հիմնադրամը «Տերյան» մշակութային կենտրոնին կհատկացնի 99.516 ԱՄՆ դոլար:

Նշենք, որ հայտերը ներկայացվել են Հայաստանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի հետ համագործակցությամբ:



Հայրենագրության նոր որակ

սկիզբը՝ նախորդ համարում

Մաշտոցի հանճարի լույսով Սեւակը մղվեց հայոց գոյի առեղծվածի որոնման, որ լեզուն էր: «*Խոսք հավաստիքի*» (1961) բանաստեղծությունը եւս ծնն է Մաշտոցին՝ յուրտարարին, ում դեմ իրեն զգում է որպես «*Դանիելյան բերատ աշուրեմ*»: Գրում է՝ *հայոց այբուբենի «...կերպը դու առել ես գուցե // Դին գործիքներից մեր դարբիններին»*: Մաշտոցին համարում է «*յոթնադարից ծայրամասերը*», իրեն՝ բաղաձայն: Մաշտոցին նույնացնում է ժողովրդի հետ, նրան դիմում ոճական յուրահատկություն ստացած «*Դու*»-ով եւ տրվում խորհրդածությունների: «*Եվ Դու եզակի մի հարկահավար... // Առ ու պաշարի յոթ // Տասնվեցդարյա հարկը մեր հոգու*»: Մեծի ու փոքրի իրար լրացնող հակադրությունը շարունակվում է: «*Աշխարհագրոսիդ համեմատությամբ // Ես մինչեւ անգամ Արաքս չտեսած տնաբնակս*»: Հակադրության հանգրվանը սուրբ Օշականն է, ուր մնչում է հայոց գրի հայրապետը: Մեծին բարեբանելու համար հաջորդում են ոճական նոր դարձվածներ՝ «*Կանխատեսության համար չեմ ծնվել*», «*Յոթնետեսության համար չեմ ծնվել*»: Նպատակը սերունդների կապը միաբանելն է: «*Ննջի ուրեմն սուրբ շիրիմիդ տակ, // Քանգի արթուն ես մեր հոգիներում: // 2^ե որ ինչ-որ տեղ փորձես ու մեծը // Հավասարվում ենք, դառնում աջակից. // -Դու... գործն ես արել, // Մենք... հանձն ենք առել*» (1, 516):

Հայոց լեզվին նվիրված գործերը եւս բնութագրվում են: «*Մայրենի լեզու*»-ն (29.01.1962) ասես ծնվում է Մաշտոցին՝ «*Դու մեր մեծ երթի գավազանակիր...*»: Լեզու-ժողովուրդը հայրենիքը եռամիասնությունն է: Թեեւ թշնամին մեզ շատ բանից է զրկել, բայց չի կարողացել զրկել մայրենի լեզվից, հաջորդում են համեմատությունները: *ինչպես չեմ կարող խել մի որոշ, // Որ հազարամյա դաժան մարտերում // Փողփողացել է միշտ էլ... սրտերում*: Զգալով, որ չի սպառում մաշտոցյան մոտիվներով թարմացրած հայրենագրությունը՝ նույն օրն սկսում է «*Հայոց լեզուն*» եւ շարունակում ու ավարտում երկու օր անց: Այստեղ արդեն ոչ թե լեզվի գովասանությունն է, այլ հայերենի բառազանձի հարստության պատկերավոր ցուցադրությունը: 126 տող շարունակ ասես հայոց բառաբանի հրավառություն լինի: Ունի բնաբան. «*Ձրոյսը ի քոյոց քեզ մատուցանեն*»: Հայերենն է եւ՝ որպես հնամենի լեզու իր հնաբանություններով, եւ՝ որպես արդիական լեզու իր նորաբանություններով, եւ՝ որպես աշխարհի մարտահրավերներին համաբայլ ընթացող լեզու: Հայոց երկիրն է բնաշխարհով ու պատմությամբ, ժողովրդով եւ հոգեւոր արժեքներով: Ահա սկիզբը:

*Պահածոյացած քո մեջ ես պահում
Արեւազալի նշողունը շեկ,
Մեր երդիկների նշույնը շեղ,
Շինականների խոփի շառայլը
հորովելների անկունադարձին,
Մանգաղի շողքի արծաթ բանվածքը
արտի ուկու մեջ,
Խուրի երթեւեկ ցուլափոխանը
ակնաշաղցիկ,
Զինվորագրյալ քաջերի զենքի ճառագայթումը արփալուսի տակ,
Ատրուշանների բացխալ բոցերի մարզանք մրցումը բոլորանվեր,
Խաչերի ցուլը ցնորաբերող,
Գրակալների ծաղկող մոմերի*

*պլպլոցը պաղ,
Եվ փաշլը, մաեւ շառավիղում մեր տխուր-զվարթ ճանաչող աչքի* (6, 113):

Տող առ տող ընթերցողը կանգնում է գեղարվեստական հերթական հրաշալիքի առաջ՝ ընդգրկելով ամբողջ Հայաստանի կերպարը՝ փափկասուն կանայք, մամիկներ, ռամիկներ, ռազմիկներ, սեպուհներ, մեխաններ, տաճարներ, վարպետներ, ճարտարապետներ, գուսաններ, տաղերգուներ, հայրեններ, հարս ու փեսա, Եփրատ ու Երասխ, վարդավառ ու հարսանիք, Սեւան


ու սոսի, Խորվիրապ ու հավատի մարտիրոսներ... Լեզվի այս նկարագրելի ծփանքն ավարտվում է իմաստուն վերջաբանով:

*Դու այսպիսին ես,
Այսպիսին ես դու:
Եվ երջանիկ է, ով քեզ կարող է
կոչել Մայրենի:
Երանելի է՝ ով քեզանով է խոսում
ու դատում...*

*Դու՛ իմ մայրենի՛,
Այսպիսին՛ ես դու:
Եվ ես՛ երջանիկս ու երանելիս,
Ես չեմ, այդ ես չեմ քեզ տիրապետում-
Հավիտյա՛ն եւ մի՛շտ,
Եվ այժմ՛ մաեւ՛:
Քեզանով իսկ քեզ փառաբանելիս*
(6, 116-117):

«*Եռանդյան պատարագ*»-ը (1965) Սեւակի հայրենագրության ամփոփումն է: Եռանդյան եւ պատարագ՝ նորից ծայր, նորից երաժշտական մարմնավորում, եւ պատարագ՝ որպես եկեղեցական ծիսակատարություն: Այս երկու խորհրդանշաններն իրենց տեղն ունեն «*Եղիցի լույս*» գրքի համակարգում, որտեղ զետեղված է պոեմը եւ որտեղ շատ են խորհրդանշանները, այդ թվում նաեւ հոգեւոր: Այստեղ պատկերային համակարգը նոր բովանդակություն է ստանում: Հայաստանը՝ «*Երկնքից առկախ մի լեռնակողք*», Սիսն ու Մասիսը՝ երկնքից երկրի վրա իջած երկու գանգ, որոնք ղողանջում են (դարձյալ ղողանջ, ինչպես «*Անլռելի...*»-ում) «*ողթան երգերի չափ ու կշռությունով, // բամբ բամբիներով նվազակցությամբ, // շարականների ելեւէջումով պատարագատու*»: Այդ ղողանջները հնչում են որպես կոչ՝ «*Ողբան մեռելոց*», «*Բեկանեմ շանթեր*», «*Կոչեմ ապրողաց*»: Հայրենի է, որ Շիլլերի «*Ձանգի երգը*» (1798) բանաստեղծության այս լատիներեն բնաբանը փորագրված է եղել երմամիայի, ընդհանրապես եվրոպական շատ եկեղեցիների գանգերի վրա՝ Անգլիայի Լանկաշիր քաղաքի մայր տաճարի, մաեւ Շվեյցարիայի Շաֆհաուզեն քաղաքի Ամենայն սրբոց թանգարանում պահվող 4,5 տոննա կշռող գանգերի վրա: Ահա Սեւակը դրանք օգտագործել է մասնակի փոփոխություններով:

Ինչպես Մաշտոցին նվիրված պոեմը, սա եւս ամբողջ քնարական խորհրդածություն է՝ հայոց բախտի մասին: Խորհրդածությունների առաջին շարքի նյութը հայոց ցեղասպանությունն է: «*Ողբան մեռելոց*» արտահայտությունը պարբերաբար կրկնվում է, հիշեցնում, վերհիշեցնում հիմնական գաղափարական ուղղվածությունը: Եղեռնի զոհերի ողբն է որպես սզո պատարագ: Հաջորդական շարքերի մեջ արյունոտ պատկերներ են «*Բոլոր բանտերից ազատվել էին մարդկայաններին*» // *եւ զինել զենքով // ու հրագեցնով* // *-Կեցցե Բարաբա՛ն... // Եվ լցվել էին բոլոր բանտերը մարգարեներով // խոսքի՛ ու երգի՛, // մտքի՛ ու ձեռքի՛, // հույս ու հավատքի մարգարեներով* // *-Հիսուսի՛ն ի խաչ...*» (4, 271): Մեկ եւ կես միլիոն ընթացքում դառնում է երկու միլիոն: Եղեռնը բացվում-ցուցադրվում է ամբողջ սահմակելի տեսարաններով... անգամ դազաղի մեջ թաղվելու ու գերեզման ունենալու միփթառանք, որովհետեւ բռնազաղթի ճանապարհին ընկնում ու մնում էին որպես կեր ցին ու անզոհերին, գայլերին ու բորենիներին: Ահա այդ զոհերը ահարկու ծայրերով հանգերգում են՝ «*Բեկանեմ շանթեր*»: Բանաստեղծի եղերահայր կերպարն ավելի ակնհայտ է դառնում հաջորդ դրվագում, երբ մուտքի տողերում ասում է. «*Բեկանեմ շանթեր // իմ գլխի՛ վրա*»: Ձոհի, մահատակի, ինքնագոհաբերման խորհրդանշական կերպարներ պատմության մեջ կային. ստեղծվում է մի նոր պատկերաշար՝ բանաստեղծ, ում մագերը սպիտակել են «*աճյունից ճերմակ*», ում բիբերը «*խառնարաններ են ծփացող հուշի*», մթին հոգին կուրպաներ է, լեզուն՝ կապ ընկած, որովհետեւ ի գորու չէ «*անպատմելի պատմել*»: Նորից նույն խորհրդանշական ծանր սկիզբն է. «*1915 թվին...* //



*Եվ այդ թիվն էր, // որ մի ամբողջ ազգի աղոթքը սառեց շրթուների վրա, // լերդացավ բերնին // բերնից դուրս ժայթկող արյան հետ ու պես, // Մինչդեռ շների աղոթքը լսվեց անտեր երկնքում... // Եվ ոսկրով ծածկվեց մի հսկա երկիր, // ուր (ճիշտ են ասել ու ճիշտ են ասում) // եղել էր ու կար շնից շատ իշխան, // բայց իշխանություն չի՛ եղել երբեք. // եղել էր ու կար թերեւս արդար, // բայց արդարություն... ալլախը թող տար. // երկիր, որ տրվեց դարեր շարունակ ալանթալանի, ուստի չէր կարող չլինել աղքատ ու դատարկափոր: // Եվ ասում են ձեզ՝ // պատվիրանի պես. // -Կոչեմ քեզ իմ թագաւորի ցուլից. // գահակալ ծիռն, // բայց ավելի շատ՝ // գայիստակիր մուրացկաններից պետք է սարսափել // վասնզի եթե փորք թափուր է եւ փին է դատարկ, // ապա գուլխը լեփլեցուն է միշտ ոճիր-մախճիրով» (4, 279-280): Ընթերթը բեկանելը հերթական ոճրագործության ճանապարհը փակելու համար է՝ նորից չկրկնելու՝ «*Կորիզ՛ օրն յորում ես ծնայ*»: Սեւակը երկար ու ծիգ մենախոսում է, կրկնաբերում «*Բեկանեմ շանթեր*» արտահայտությունը, բեկանում ամեն մի չարիք ու փորձանք եւ նորից պատկերում եղեռնի զարհուրելի տեսարանները: Նկարիչի աչքով մայելիս՝ սա նկարաշար է, երաժշտի՛ նվագ-համանվագ, երգ-խմբերգ-համերգ, իսկ որպես պոեմ՝ բազմաձայն ասք-ասերգ: Բանաստեղծն իրեն վերագրում է մարգարեի երեսույթ, իրեն տեսնում Սիս ու Մասիս եւ պատգամներ հղում: «*Եվ դու չես լսում, ոչ էլ դու, // այլ ե՛ս, // ես՛ Սիս-Մասիսը, // այդ ես եմ լսում...*»: Արարատի մեծ ու փոքր գանգերն այսպես ղողանջում են զգուշության եւ կոչում:*

Երրորդ դրվագում կրկնաբերվում է «*Կոչեմ ապրողաց*»: Ժամանակի հետ գալիս հասնում է մինչեւ ֆաշիզմի զագախցերը եւ լայնացնում մտահոգությունների շրջանակը: «*Եվ ասում են ձեզ՝ // ուշացածի պես. // -Մե՛ր, մայր մեր, լուկ մեր ապրածը հետո // վերապրեց ինքը աշխարհը համայն՝ // երբ Վիլիելմ Յոզեֆ Յիտլերին ծնեց // եւ թալեաթը ծնեց Յեբեյիսին. // երբ չեթեմ իրեն խես անվանեց, // եւ երիցերին կոչվեց գեստապո, // շեհիդն ու միլիոն՝ պատերազմ տոտալ, // Նոր կարգ՝ հիթլերի հոջուները ինն, // հազգ դին ասվածը՝ նորակոչ նացիզմ, // եւ ցեղը՝ ռասսա, // ժոյն թուրքը՝ ֆաշիստ» (4, 304): Հայոց ցեղասպանության ինչեցունն առաջիկա աղետների տագնապալի կանխատեսումն է, ըստ որի՝ Բուխենվալդը, Օսվենցիմը, Մայդանեկը, Դախաուն հիմնադրվել են Չանգըրում, Տեր-Ձորում, Զիարեթում, Էնկյուրիում, Ռաքքայում, Բաբուն... Սա մաեւ զգուշության կոչ է: Համաշխարհային տեսադաշտում արձարծվում է Հայոց դատի միջազգային ճանաչման հարցը: Պոստդամոս, Նյուրբերգում գերմանական ֆաշիզմը դատապարտվեց, բայց Հայոց դատն իր ահավորությամբ անգամ դեռեւս չի էլ գիտակցվում: Այս տեսադաշտում*

չի նվազում հայրենասիրական տարերքը: *Մեր հայրենիքը մեզնից դատարկվեց: Բայց... ոչ մի վայրկյան, ոչ մի ակնթարթ մենք չենք դատարկվել*
մեր հայրենիքից:
Մենք սպանվեցինք մեր հայրենիքում, բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց, ոչ, ապրում է նա կրկնակի՝ կյանքով: Իսկ ով չսպանվեց, փրկվեց
պատահամար,
նա արտորված է իր հայրենիքից
(4, 310):

Հիշողությունը վրեժի ու հատուցման է ձգտում, որովհետեւ «*Հայրենիքն այն է, որ ոչ թե կորչում, // այլ ընդամենը հափշտակվում է*»: Կարմիր ջարդին հաջորդում է սպիտակ ջարդը, ժողովուրդը քամու բերանն ընկած հեռանում է արմատներից, կորցնում է լեզուն, ծագունաբանական ինչողությունը: Սեւակյան եզրակացությունը Չարենցի հավաքական ուժ դառնալու պատգամի մի նոր երեսն է. «*Դու այսուհետեւ ժողովվես պիտի // նախ ինքը քո մեջ, // եւ ապա՝ քո շուրջ*»: «*Հայաստանն առանց հայերի՛» դավադիր ծրագիրը գործել է մշտապես եւ հերթական փորձություններն առջեւում են, քանզի «Աքսորը միայն բռնի չի լինում, // այլեւ կամովին, // եւ առավել է տխուր ու տրտում ոչ մեռելոցը, // այլ գերելոցը: // Օտարության մեջ ազատ լինելն էլ ա՛յլ գերություն է, // եւ տան մեջ նույնիսկ գերի լինելը՝ ա՛յլ ազատություն» (4, 256): Հնչում են միաբանության, հայրենաշինության, հայրենահիացունի կոչեր, պատգամներ, կարգախոսներ, համոզումներ, պարտադրանքներ, որ մարմին ստանա «*փոքրիկ հողի երազանքը մեծ*»: Հաջորդում է մարդկայնացման պատգամը, այն, ինչ ժամանակին Վարուժանն էր ասում, ըստ որը՝ դեպի մարդը տանող ճանապարհն անցնում է հայրենիքի պատմության միջով: «*Պիտի սկսես ասել վերջը լուկ կյանքե գրել. ահագին հեղեղ մը կա ներսս՝ որ մինչեւ ցարդ հայրենիքի դիակներով թմբկած էր: Լարերս փոխելու վրա եմ*»: Հայրենասեր Վարուժանն ուղղվում է մարդասեր Վարուժանի դեմ: 1909-ին Թեոդոսիոս գրում էր. «*Ա՛հ. որքան պիտի ուզեի Մարդ էակին գիրքը գրել: // ... // Հայրենիքը գնեց մեր անձեն խիստ հեռացուցած է*»: «*Վերքը կարյունի*» (1912) հոդվածում հարցի շրջանակը լայնացնում է. «*Դարեր ի վեր այլասերումի ենթարկված ժողովուրդ մը հարկ է ազատագրել՝ անոր վրայեն թոթափելով իր ցեղային հատկությունները կրծող կարգ մը ժամգերը: Արդեն իսկ իրենց հոգիին ամբողջականությունը պահող ազգեր պետք չունին տղան այնպես, ինչպես մենք դեռ պարտական ենք ընել, անոնք ամենն ավելի կը ձգտին մանուկին մեջ փրկելու Մարդը. իսկ մենք Մարդը փրկելու համար պարտավոր ենք փրկել անոր վտանգված Հայությունը, քանի որ նախ եւ առաջ ատոր պետք ունինք*» (ԵԼԺ, 3, Ե., 1987, էջ 468, 135): Սա համամարդկայնության ձգտող հայ գրողներից յուրաքանչյուրի ճակատագիրն է, որ Սեւակը ձեւակերպեց այս տողերով. «*Եւ մարմնավորված մեր երազների բուժիչ բարությանը // մենք էլ ազատվեց մեր ոխ ու քեմի ցածր զգացումից. // որ դրանով իսկ չնսեմանանք անգամ մեր ներսում, // այլ մնանք մեր վեհ հպարտության վերականգնելու վրա: Եվ այսպես՝ խորենացու «Ողբ»-ից մինչեւ Շիրազի «...Դանթեականը», Սեւակի «Անլռելի...»-ն ու «Եռանդյան...»-ի պատգամը: «Ողբան մեռելոց... // Բեկանեմ շանթեր... // Կոչեմ ապրողաց...»:**

Դավիթ ԳԱՄՊՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գրիգ, սուր, ոգի... անմահություն

սկիզբը՝ էջ 2

Գրականությունը հավատալի մարդու խոստովանություն է. գրականությունը մտավորական է: Ինչի եւ ում մասին էլ մենք գրենք՝ դիմապատկերի ենք բերում ինքներս մեզ: Եթե դիմապատկերի չենք եկել, եթե մեր հեռանալուց հետո խորանը չի պահել մեր պատկերը՝ նշանակում է մեր խոսքի ոչ մի շշուկը խոստովանանքային չի եղել, մեր բառերից ոչ մեկը չի ծեփվել այդպես էլ չհառնած մեր պատկերին, նշանակում է մենք չենք էլ եղել ճշմարիտ բանի այս աշխարհում:

Վազգենի ոչ ծավալուն գրական վաստակը - ոչ ծավալուն որովհետեւ գրական կյանքի տեղատվության ժամանակների սերնդից էր, գրանով չէր եւ խելագար արագությամբ փոխվող, փոփոխվող, ուղղակի փախչող, հեռացող կյանքին մասնակցությունը գրականությամբ, միայն գրականությամբ՝ նրան իրավացիորեն անլիարժեք, անմասնակցություն էր թվում, - գրական իր կարծ կյանքի ժամանակում ոչ փորձառու, երիտասարդ, գրեթե պատանի ձեռքով ժողովված այդ վաստակն ահա, այդուհանդերձ, ներառելով մեր ֆանտաստիկ, մեր ֆանտաստիկազորիկ, մեր բնագանց իրականությունից շատ եական եզրեր, միշտ կարելուր ներկայություն սպահովելով «փոթորիկ սանձողի»՝ հեղինակային կամքին, եթե կուզեք՝ ներառելով անգամ ինչ-ինչ ծվեններ իր եւ մեր գլխին գալիքից, այդ վաստակն ահա կայուն դիմապատկերի է բերում երեսնամյա Վազգեն Սարգսյանին: Նշանակում է՝ խոստովանանքի նրա բառը ծեփվել է, նրա հեռանալուց հետո իր խորանը ամայի չէ, ճշմարիտ բանի տաճարը իր հիշողություն է ներքաշել կայուն դիմագծի մի նույնքան խոշոր անհատի, որքան ռազմի ու քաղաքականության ասպարեզը՝ սպարապետին ու գործչին:



Եվ վաղվա օրով, երբ մեր ծանր հորիզոնների աղջամուղջում վիճարկվի մեր այսօրվա եւ այսօրվա մեջ ռազմի ու քաղաքականության այդ խոշոր այրի հսկությունը - նրան ու իր ժամանակին, նրան ու իր խոյունքաց վերելքին, դեպի իր կործանումը նրա հանդիպակաց խիզախ երթին վկա ու պաշտպան է կանգնելու այս գիրքը՝ գրված Վազգենի վերջնաբացից ու անկունից շատ տարիներ առաջ («Վազգենը», 19 սեպտեմբերի, 2000 թ.,

Վազգեն Սարգսյանի արձակ ստեղծագործությունների «Խաղը» ժողովածուի առաջաբանը):

Մինչեւ իր մուտքը պատերազմի ու քաղաքականության այս ժամանակներ՝ Վազգեն Սարգսյանը լավ գրող էր. բառը, միտքը, կերպարը, գործողությունը նրա առջեւ սպիտակ թղթի վրա այնքան հնազանդ ու ճշգրիտ էին, այնպես էին շարժվում ու քեզ իրենց հետ տանում, ինչպես լինում է լավ գորահրամանատարից կառավարվող մարտադաշտում. էնոցիաների շրայլում չունեք, բոլոր բառերը վարժ գինվորի նման կարելուր ու պարտադիր մասն էին գլխավոր մտքի, բոլոր կերպարները իրենց պարտքը կատարում էին գերագանց,- եւ սպիտակ թղթի վրա մեր 25-30-ամյան տոնում էր

հաղթանակի բերկրանքը՝ ճիշտ մարտը շահած զորահրամանատարի նման. ասել է թե՛ Վազգեն Սարգսյանը շատ լավ գրող էր, ինչը այդ տարիքում միայն եզակիներին է տրվել, եւ ասել է թե շատ լավ գրողները կարող են շատ լավ զորահրամանատարներ լինել ճիշտ այնպես, ինչպես լավ հրամանատարները լավ էլ գրողներ են դառնում. վկայությունների կարիքը չկա: Նշանակում է, թե գրի, գրականության ուրախությունը, պատմելու, պատմություն կառուցելու հրժվանքը ամեն մի հառնող մեծության անկապտելի հատկանիշն է, թե բառերը նրանց գրիչների տակ չեն մեռնում, թե պատմությունները նրանց լեզուների տակ չեն մեռնում-ծնվում ու խաղում են որպես կենդանի գործն ինքը: Եվ գործը նրանց ձեռքի տակ չի մեռնում-ծնվում, հաստատվում, գորանում, տրվում է խոսքի, պատմելիքի, պատմության: Նրանք բախտավոր ծնունդ են, նրանք բառի բուն իմաստով լոգոսի՝ մեծագիր բանի ժառանգորդներն են, նրանց բանը գործ է եւ գործը բան:

Ստածվող-չսավող, մտածվող սեւ հոգիներում գիշերաբուխ պես դարանած խոսք կա՝ թե քայքայման ու պատերազմի մեծվեցին առաջինը նրանք, ովքեր ծախողվել էին խաղաղ աշխատանքի իրենց մարգերում: Միանգամից պետք է «այդպես չէ» ասել եւ այդ սեւ խոռոչների բերանը ծեփել: Այդպես չէ, իսկ Վազգենի վերաբերմամբ՝ ամենեւին այդպես չէ:

չարունակությունը՝ էջ 9



21-րդ դարը մե՛րն է լինելու

(դրվագներ գրառումներից, ելույթներից)

➤ Հասել է ուժեղի, ոգով ուժեղի ժամանակը: Ով ամուր եղավ, նա էլ հաղթելու է: Փառք Աստծո, մինչեւ հիմա էլ մեր նվաճումները, հաղթանակներն անհամեմատ ակնառու են եղել, քան կորուստները, պարտությունները: Մեզնից, միմիայն մեզնից է կախված, թե, ի վերջո, ինչպես է լուծվելու Ղարաբաղի հարցը:

➤ Պատմությունն այսօր էլ մեզ հրաշալի հնարավորություն է ընձեռել վերհիշել մեր նախնյաց փառքը, հասնել ժամանակի գնացքին: Ավելին՝ մեր ողջ պատմության ընթացքում մենք երբեք ավելի մոտ չենք եղել մեր վերջնական հաղթանակին. էլի մեկ-երկու լիարժեք քայլ. էլի մի քիչ հանքերություն, փոխադարձ հանդուրժողականություն, եւ 21-րդ դարը մերն է լինելու:

➤ Մենք մեր ազգային պատերազմը անընդհատ հետաձգել, բերել-հասցրել ենք 21-րդ դարի շեմին, հիմա էլ մտենք-մտածենք, թե այդ կռվում արժե, թե չարժե զոհվել: Ճիշտ են արել, որ կենաց ու մահու ընտրության կոչով են դիմել: 1915 թ. առանց լուրջ դիմադրության թողեցինք, որ մեզնից միլիոն ու կեսին կոտորեն: Տասնյակ հազարավոր մարդիկ այս ընթացքում զոհվեցին բնական աղետներից: Տարիներ հետո սերունդները մեր մասին դատելու են ոչ թե նրանով, որ 1989-1995թթ. հինգ հազար հրաշալի զինվոր կորցրինք, այլ այսպես՝ ստեղծեցինք պետություն, թե՛ ոչ, պաշտպանեցինք մեր հայրենիքի սահմանները, թե՛ ոչ: Աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ ժամանակային ինչ-որ հանգրվանում իրենց պատերազմը տվել են: Հաղթել են, պետություն են ստեղծել այն ժողովուրդները, որոնք պատերազմի կես ճանապարհին չեն հոգնել: Ռուսները, երբ զգացին, որ բանակների պատերազմում տանուլ են տալիս Նապոլեոնին, հնարեցին Հայրենական պատերազմը: Եվ դա ամենագեղեցիկ բանն է, որ երբեք հնարել է որեւէ ժողովուրդ: Ասելս այն է, որ պատմության շառավիղներում մենք չցուցաբերեցինք համապատասխան կամք, հավաքականություն, չունեցանք մեր 50 հազարանոց բանակը, չունեցանք Հայրենական պատերազմ հնարելու ռուսական հրաշագործ միտքը, այլպես այսօր ֆրանսիացու պես կճամփորդեինք, կսիրեինք, դեմոկրատիա կխաղայինք, մարդու իրավունքներից կխոսեինք, կենդանիների եւ բնության պահպանության շարժումներ կծավալեինք, կովկասյան տուն կառուցելու գաղափար կնոգոնեինք:

➤ Հայ ժողովուրդը վերջին տարիներին համազգային սխրանք է գործել, եւ անչափ ցավալի, ճակատագրական կլինի, եթե թյուրիմացությունների, անվստահության, անմիաբանության պատճառով հանկարծ տանուլ տանք արյունով ու մաքառումներով ձեռքբերվածը:

➤ Յուրաքանչյուր ժողովուրդ իր պատմության ընթացքում գոնե մեկ անգամ իր կռիվը պիտի մինչեւ վերջ տա: Աշխարհի ուժեղներն այդ բանը արել են միջին դարերում, մյուսները՝ ավելի ուշ, եւ յուրաքանչյուրն ըստ արժանավույն իր տեղն ու դերն ունի այս արեւի տակ:

➤ Յուրաքանչյուր ժողովուրդ իր պատմության ընթացքում գոնե մեկ անգամ իր կռիվը պիտի մինչեւ վերջ տա: Աշխարհի ուժեղներն այդ բանը արել են միջին դարերում, մյուսները՝ ավելի ուշ, եւ յուրաքանչյուրն ըստ արժանավույն իր տեղն ու դերն ունի այս արեւի տակ:

➤ Ժողովուրդ, պատերազմը չի ավարտվել: 21 ավարտվել: Աստված գիտի՝ ինչ է լինելու:

Նելու: Մի քիչ թուլացանք, պարտվելու ենք: Զոհն եղեք, որ չպարտվեք:

Ստածեք եւ երկրի մասին: Ստածեք եւ բանակի մասին. սա է եւ երկրի փրկությունը: Սա է, էսօր, ցավալիորեն, ամենակայացած արժեքը: Ցավալիորեն:

Ստածեք եւ երկրի մասին:

➤ Կարելուր ժողովրդի ոգին է: Ոգով եւ սոցիալական ավելի վատ պայմաններով կարելի է պատմական կտրվածքով հերոսություններ անել: Առանց ոգու՝ սոցիալական ամենալավ պայմաններում անգամ կարելի է դառնալ անդեն, անգույն եւ աշխարհի հզորների հետ նույն սեղանի շուրջ նստելու իրավունք չունեցող մի գանգված:

➤ Տարածաշրջանը, ուր մենք ապրում ենք, լավագույններից չէ նաեւ բարոյական չափանիշների իմաստով, մեր ոչ մի հարեանից մենք բարձր կազմակերպվածության, կարգապահության, պետականության դասեր առնել չենք կարող: Ել չեն խոսում տարածաշրջանային մեթափիտեոսի համարում ստացած կաշառակերության մասին: Եվ եթե մեր հարեաններից յուրաքանչյուրը Մեծ Աշխարհի հետ հարաբերություններում այս ամենը կոմպենսացնող որեւէ ծանրակշիռ խաղաքարտ ունի՝ ծավալային, քանակային, ռեսուրսային, ապա մեզ մնում է մյուսներից ուղղակի մեկ զուլիս ավելի կազմակերպված, նպատակասլաց, բարոյական լինել վերջապես: Ակնհայտ ճշմարտություն է, որ լավ հավաքված փոքրը, քիչը՝ հաճախ ավելի ուժեղ է հզոր է, քան վատ հավաքված մեծն ու շատը՝ լինի դա պետություն, բանակ, թե ընտանիք:

չարունակությունը՝ էջ 9

Գրիգ, սուր, ոգի... անմահություն

սկիզբը՝ էջ 8

Այլ խնդիր է, որ խաղաղ աշխատանքի այդ մարզերը ամենահաջողակներին անգամ չէին գահացնում, մեզ հաճախ պաշարում էր ծանր մղձավանջը, խելագար պորթլուծի պահեր էին լինում՝ երբ ուզում էիր գրիգն այդպես թողնել գրասեղանին եւ փողոց նետվել գեներ ձեռքիդ. դա ի՞նչ էր - երեւի թե վերահաս աղետի կանխագագուցը, գալիք փլուզումը իրեն մեր մեջ երեւի թե զգացնել էր տալիս, երեւի թե դա հուսահատ բողբոջ էր մեր դատապարտվածության առջեւ, ինչի մեջ մենք որեւէ մեղսակցություն չունեինք - մեր կյանքերից առաջ մեզ չհարցնելով գրել էին՝ թե պետք է պարենք կեսկյանքով եւ թե մեր թափած ջանքը խորտակվելիք նավի վրա է: Սա հաստ էր բոլորիս, բայց աղետի ու վերածնության մարտահրավերն անմիջապես ընդունեցինք քչերը, նրանք, ովքեր տեսան ու լսեցին այն, ինչ տեսան ու լսեցին. դա այդ քչերի, այդ առաջամարտիկների առաքինությունը չէր, ինչպես որ շատերիս, գրեթե բոլորիս մեղքն ու արատը չէր այն, որ հապաղեցինք-հասպաղեցինք, որովհետեւ չտեսանք այն, ինչ տեսանք, խլացանք ու չլսեցինք այն, ինչ լսեցինք. չլսեցինք, որովհետեւ չուզեցանք հավատալ, որ մեր դուռը թակում է ինքը՝ ճակատագիրը:

Դրանք մեզք եւ առաքինություն էին դառնալու հետո, երբ նոր իրականությունը, երբ հաղթանակի եւ պարտության բեռը իր ողջ ծանրությամբ ճնշեք, աղարտեք, աղավաղեք, ուղղակի փշրեք շատերիս, եւ շատերիս համար էլ կերտիչ դրվագումն լինեք, որպես կարմիր պոլիմեր է սառը կոնահարմամբ փոխվում անդրի: Դրանք մեզք եւ առաքինություն էին կնքվելուց հետո,

երբ մեր դատախազները եպիսկոպոսի վեղար առնեին եւ պատերազմի ու փորձության ժամի մասին դատեին խաղաղության ու հավիտենության ժամանակների օրենքներով:

Չանձին Կազգենի՝ հայրենի գրականությունը հայրենիքի քաղաքականության, դիվանագիտության, պետական եւ բանակային շինարարության, պատերազմի եւ խաղաղության հայրենի նոր իրականություն էր ուղարկում իր ամենալավը՝ որ կարող էր, նրան՝ որ դրվագվելու էր մաքուր պղնձի պես, նրան՝ ով ծնվել էր հաղթանակի եւ ուրախության հրճվանքով առլեցուն, նրան՝ ում հակացուցված էր հոգեւոր ժանգը՝ բողբոջվորի, գանգատավորի, միշտ ուրիշին, միշտ քեզ մեղադրողի տեսք առած, նրան՝ ով հաղթանակի եւ ուրախության հրճվանք էր ճառագուն՝ երբ խաղաղաշտում կարողանում էր թեկուզ դադալությամբ պարտությունից մի կերպ պրծնել, երբ թուրք ընկերոջ հետ բեռնավազոնները շիֆեր էր բարձում ու լավ քրտնում, երբ պիտի լավ լողանար, երբ պիտի ամբողջ 270 ռուբլի ամսավարձ ունենար, երբ հակառակորդը հիմար էր, երբ քչանամին խելքով ու գործությանը գերազանցում էր իրեն,- այդ ամենի, ամբողջ աշխարհի առջեւ նա հաղթանակի եւ ուրախության բերկրանքով էր կանգնած, բերկրանքը նրա հոգու ու մարմնի ունեցվածքն էր: Նա համակել էր գործում իր բերկրանքով անգամ հակառակորդին, անգամ քչանամուն:

Եվ սա խոստովանությունն է մեծ նահատակի առջեւ, սա այսօր հստակ գիտակցումն է անհրաժեշտության այն խոշոր անհատի, այն մեծ լավատեսի, որ այսօր պետք է կանգնած լինեք մեր ազգային պետական-քաղաքական հրապարակում եւ կանգ-

նած չէ: Նրա կենդանի ներկայությունը մեզ միմյանց եւ աշխարհի հանդեպ պահելու էր բոլորովին այլ կեցվածքով - նրա բացակայությունը բեկբեկում է մեր խոսքը, եւ մեր քայլը հաստատուն չէ:

Այո, խելառվում եւ մոխրագունում - մոխիր էր կտրում նենգության հանդեպ, այո, արմունկներով տղա էր, բայց կայացած ո՞ր անհատը չի պինդ արմունկների մարդ եղել - իմ ու ձեր Քրիստոսը, իմ ու ձեր Դորոն, Նժդեհը, Մեարոպ Մաշտոցը, Քեմալ Աթաթուրքը, թե՛ Մեծ հայրենականի փառաբանված գեներալներից մեկնումեկը: Մարդկային պարզ փառասիրության եւ չկամների ու չկամության մեր զանգվածի միջով իրենց ճանապարհը նրանք բացում են արմունկներով. արմունկ բանեցնելը նրանց մենք մեր պարտադրում, որովհետեւ մեր սրտերում գեներալներն իրենք չեն - մենք ենք:

Մենք բոլորս գեներալներ ենք, մենք բոլորս փրկիչներ ենք, մենք բոլորս մանթաշովներ ենք, մենք բոլորս կաթողիկոս ենք - շարքային հացակերի մեր կյանքերը մենք այնպես ենք քշում հանրության միջով, ինչպես գութ ու գռռ շաղելով Մանթաշովն էր իրեն տանում առավոտյան ժամերգության, ինչպես կաթողիկոսն է հպատակ հավատացիների գլուխների վրայով տանում իրեն, ինչպես գեներալներն են տողանցում քարացյալ շարքերի միջով:

Մենք բոլորս պողոս - առաքյալներ ենք - մեզ նեցուկ ունենալու, մեզնով շտկվելու, մեզնում ապաստանելու հրավեր ենք կարողան ընկածներին, խեղվածներին, հաշմերին, եւ նրանք այլևս մեր հպատակներն են, մեր թագավորության բնակիչները, մենք նրանց վրա թագավոր պարտադր ենք: Մենք նրանց մեզ համար պատվանդան ենք




անում, եւ մեր բարձրերում կարող ենք գոհանալ, թե նրանց մենք սիրում ենք՝ այդ ընկածներին, խեղվածներին, հաշմերին, թե մեր թագավորությունը խղճի ու գութի արքայություն է:

Իսկ ովքեր գեներալական մեր շքեղ շքերթի առջեւ հնազանդ կանգնած չեն՝ նրանք արդեն թշնամի ու թշնամական բանակից են. ովքեր հաշմ ու խեղված ու ընկած չեն՝ նրանք արդեն մոլորյալ ու կորուսյալ են: Մենք դժվար, անասելի դժվար ենք ընդունում, որ մենք Մանթաշով չենք, Մանթաշովն մենք չենք. մենք առաքյալ չենք, Պողոս առաքյալը մենք չենք, մենք հպատակեցնում ենք անասելի հրճվանքով եւ հպատակվում ենք անասելի տիաճությանը:

Եվ ուրեմն ես փառք եմ ասում, մեծ մարդու հիշատակի առջեւ, ես շնորհակալություն եւ փառք եմ ասում իր գորակիցներին ու գինակիցներին, ովքեր, իրենք իրենց հաղթելով, կենդանի միջանցք դարձան հերոսի եւ գործչի երթի համար, ովքեր նրա մեջ տեսան իրենք իրենց՝ թարմ ու նորոգ, իրենք իրենց՝ եռանդուն, իրենք իրենց՝ ջախելաբար քաջ, իրենք իրենց՝ սթափ, իրենց՝ խելամիտ ու պատրանքների չտրվող, բայց եւ պատրանքները նյութականացնող, իրական գործություն դարձնող, որպես ոգին է մարմին առնում, որպես մարմինն է գործունակ ոգով:

Փա՛ռք մեզ, որ կարողանում ենք մեծարել, մեծացնել եւ հավատալ, որ կանգնում ենք եւ հավատում, որ մեր ամենալավերը կհառնեն մեզմից եւ մեզանով («Կազգենը» (պատկերազարդ վավերապատում՝ Այդին Մորիկյանի խմբագրությամբ) գրքից):

Յրանտ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



21-րդ դարը մե՛րն է լինելու (դրվագներ գրառումներից, ելույթներից)

սկիզբը՝ էջ 8

➤ Եթե մենք իսկապես պետական այրեր ենք եւ մեր պետությանը նայում ենք ոչ թե մեկ օրվա կտրվածքով, այլ հավերժության, պետական ծրագիր պիտի մշակենք: Այսօր այդ ծրագրերի մասին խոսելը նույնիսկ ծիծաղ կարող է առաջացնել, որովհետեւ առօրյա խնդիրների մեջ այնքան ենք խրված, եւ այնքան լուծված չեն այդ խնդիրները, որ հեռանկարային ծրագրերի մասին խոսելն ապագայի խնդիր է թվում: Բայց այդպես չէ: Ամենուր ասել են, ձեզ էլ են խնդրում՝ չիուսահատվեք: Մեր բոլորի վիճակը, ամբողջ ժողովրդի վիճակն իսկապես ծանր է, բայց անհուսալի չէ: Մենք, հիշենք, ավելի ծանր տարիներ ու ավելի ծանր օրեր ենք ունեցել: Չայրենական մեծ պատերազմից հետո, նաեւ այս պատերազմի տարիներին՝ 1991-1992թթ.: Չարթահարեցինք, ասրեցինք: Սա էլ ենք հաղթահարելու: Անկասկած, հաղթելու ենք նաեւ տնտեսական պատերազմում: Չայ ժողովուրդն աշխատող, ստեղծագործող ժողովուրդ է, երբեմն անհրաժեշտ է նրան ուղղակի չխանգարել: Բարության դաշտ է պետք, փոխըմբռնումի դաշտ է պետք, վստահության դաշտ է պետք: Մեր ամենամեծ ցավն անվստահությունն է, վստահության ճգնաժամը: Մենք կարողանալու ենք դա հաղթահարել, եւ ինչ-որ բան այս երկրում,

անկասկած, փոխվելու է: Վերջապես, մեզ հետ, թե առանց մեզ, դուք անապայման ոտքի եք կանգնելու: 21-րդ դարը հաստատ ձերն է լինելու, բոլորովին չկասկածեք:

➤ Ես ասում եմ՝ դավաճանություն է ժողովրդին ներշնչել, թե ինքը փոքր է ու անգոր: Երբեք միլիոն, թե երեք հարյուր միլիոն՝ օրհասի պահին պայքարող շատ-շատ մեկ միլիոնն է: Իսկ մեկ միլիոն անձնուրաց պայքարող ազգն իր միջից կարող է հանել: Ապացուցված բան է: Մի բան է միայն անհրաժեշտ. սնապարծության ու արկածախնդրության փոխարեն՝ լրջմտություն եւ պատասխանատվություն: Որպեսզի դուրսպրծուկները կուրծք ծեծելու ասպարեզ չունենան: Որպեսզի ինքնապաշտպանության գործը չվերածվի ինքնասպանության: Ես գործը պետական մոտեցում է պահանջում եւ ենթադրում է պետականություն: Պահը չկորցնենք, հապաղելը հանցագործություն է, տղերք:

➤ Ես հավատում եմ Չայաստանի ապագային: Ես հավատում եմ մեր տնտեսական, գիտական ներուժին: Ես համոզված եմ, որ ինքներս ենք մեր տունը կառուցելու, բոլորս միասին: Ես համոզված եմ, որ միայն միասնականության դեպքում՝ ոչ մերկապարանոց բացականչությունների, այլ իրական, գիտակից միասնականության դեպքում միայն

դրական լիցքերով մենք կարող ենք ոտքի կանգնեցնել մեր երկիրը: Պիտի կրկնեն իմ խոսքերը՝ Չայաստանը երբեք ավելի մոտ չի եղել վերջնական հաղթանակին: Մենք ունենք կայուն, մնայուն արժեքներ: Կայուն, մնայուն արժեքների այդ դաշտի վրա մենք ունենք հրաշալի հնարավորություն կառուցելու մեր երկիրը եւ 21-րդ դարը դարձնելու Չայաստանի դար: Սա է իմ համոզմունքը: Սա է շարժման համոզմունքը: Կոչ եմ անում բոլորիդ՝ համերաշխության պայմաններում միասնական լուծել այս խնդիրը: Եվ ամենեւին կարելու չէ, թե ով կառաջնորդի այդ շարժումը:

➤ «Ինձ ժողովուրդը չի ճանաչում, ինձ նորմալ ճանաչում են իմ նեղ շրջապատի մարդիկ: Մնացյալը գիտեն ինձ մոլորով, գիտեն ջղայնացած, գիտեն քրտնած, այսօրվա կերպարը դա է: Ինձ չեն հասկանում, ինձնից վախենում են: Իրենց համար արջի կերպար են ստեղծել ու իրար վախեցնում են: Մեկ-մեկ ես էլ եմ վախենում, որ չեմ հասցնի, որ ժամանակ չեմ ունենա, ցանկություն չեմ ունենա, չգիտեմ էլ ինչ չեմ ունենա ժողովրդին ասելու՝ ա՛յ ժողովուրդ, իրար հասկանալու, ճիշտ հասկանալու իրար, ես Աստված չեմ, ես գիւժկոր եմ, ես Չայ եմ, ես ...»: Չեն հասկանա: Դրա համար էլ չեմ ասում: Ամեն մարդ ինքն իր առաջ պիտի պատասխան տա՝ ով է ինքը:

ՄԿՈՒ-մասնագիտական կողմնորոշում

Վիրտուալ իրականության գործիքների ներկայացումը

Հարցազրույց «Մասնավոր հատվածի զարգացումն էլ ՄԿՈՒ Հարավային Կովկասում» ԳՄՀԸ ծրագրի ավագ փորձագետ Յուլիա Ստակյանի հետ

- Տիկին Ստակյան, ի՞նչ են իրենցից ներկայացնում ներկայումս մեծ տարածում ունեցող հավելյալ իրականության (AR) և վիրտուալ իրականության (VR) տեխնոլոգիաները:

- Բջջային սարքերի հաշվողական հզորությունը և գլոբալ թվային փոխակերպումը նոր մակարդակի են հասցրել հավելյալ իրականության (AR) և վիրտուալ իրականության (VR) տեխնոլոգիաները դուրս գալով գլխարկների արդյունաբերությունից և ընդգրկելով մարդկային գործունեության նոր ոլորտների լայն շրջանակ: Ներկայումս AR և VR տեխնոլոգիաները լայնորեն կիրառվում են ճարտարագետների, ճարտարապետների, դիզայներների, ռեզիլիտիվների պատրաստման և վերապատրաստման համար: Վերապատրաստման ծրագրերն ու սիմուլյատորները, որոնք հիմնված են VR տեխնոլոգիաների վրա, գտնում են իրենց հատուկ տեղը ապագա մասնագետների մասնագիտական հմտությունները զարգացնելու համար:

- Ինչպիսիք են հնչեցումը ունեն ուսումնական միջավայրում VR տեխնոլոգիաները:

- Ուսումնական միջավայրում VR տեխնոլոգիաները բարդ ազդեցություն են ստեղծում մարդու ընկալման վրա և իրական ժամանակում փոխադրություն են ապահովում սաղավարտների կամ այլ տեխնիկական միջոցների օգնությամբ, որոնք դիմանիկ կերպով թարմացնում են սովորողների համար տեսանելի տարածքը: Իրական վերապատրաստման միջավայր վերատեղծելու հնարավորությունը, որը նորմալ պայմաններում կապված է բարձր ռիսկի, սպառվող նյութերի կամ անձնակազմի ծախսերի, աշխատանքային որոշակի պայմանների և գործընթացների վերարտադրման անհրաժեշտության են ՄԿՈՒ սովորողների աշխարհագրության մեծացման հետ, անկասկած, VR տեխնոլոգիաները զրավիչ են դարձնում մասնագիտական

կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) համար:

- Որպես գործիք՝ VR տեխնոլոգիաներն ի՞նչ դերակատարում ունեն:

- VR բովանդակության և ծրագրային ապահովման զարգացումը կարելի է համեմատել բջջային հավելվածների հետ և դասակարգել որպես գործիք, որն ուղղված է նախ փափուկ հմտությունների զարգացմանը և որոշակի իրավիճակներում տպավորությունների, հուզական փորձառությունների ստեղծմանը և ապահովմանը, ինչպես նաև խորհրդատվությանը և մասնագիտական ուղղորդմանը (գործընթացների և դրա բնութագրերի ցուցադրում): Այն նաև նպաստում է ապագա աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացմանը, որպեսզի նրանք կարողանան լուծել կիրառական խնդիրները և բարձրացնել ստեղծական արդյունավետությունը (նախատիպավորում և վիզուալացում, աջակցություն սարքավորումների շահագործման մեջ):

- ՄԿՈՒ ոլորտում ի՞նչ կիրառություն ունեն նշված տեխնոլոգիաները:

- Ծրագրի նախապատրաստման փուլում անհրաժեշտ էր հասկանալ, թե որ գործիքը պետք ընտրել՝ ՄԿՈՒ ոլորտում փորձարկման համար, ինչպես նաև տեխնոլոգիաների ներուժը: AR-ն և VR-ն քիչ մասնություններ ունեն, և դրանք կարելի է բնութագրել որպես «ընկղման միջոցներ սպեկտրի տարբեր ծայրեր»: Խառը իրականություն (MR) ունի ավելի լայն հնարավորություններ, քանի որ այն էլ AR-ի, էլ VR-ի համադրություն է: Խառը իրականությունը շուտով կգերազանցի իր տարեցներին, և այն արդեն հիացնում է առաջացրել մարդկանց շրջանում, քանի որ երկու տարբեր տեխնոլոգիաներ միավորվել են մեկում: ՄԿՈՒ գործընկերների գնահատումը Հայաստանում ցույց տվեց, որ արագ զարգացող տեխնոլոգիաների ներկա ժամանակաշրջանում առաջ են գալիս նոր մարտահ-



րավերներ նաև մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման գործընթացներում: Աշակերտների և երիտասարդների հետ տարվող աշխատանքներում ավանդական մեթոդներին զուգահեռ կարելի էր օգտագործել նաև տեխնոլոգիական նորագույն գործիքների կիրառումը: Կարիերայի գիտակցված ընտրության գործում կարելի էր նախապայմաններից մեկը մասնագիտությունների և զբաղմունքների, աշխատաշուկայում պահանջարկի, գործատուի կողմից ներկայացվող հիմնական պահանջների, ինչպես նաև աշխատանքային միջավայրի մասին լիարժեք իրազեկվածությունն է: Ուստի, կարիերայի ուղղորդման գործընթացի անբաժանելի մաս է երիտասարդների համար ստեղծել այնպիսի հնարավորություններ, որ մասնագիտությանը և զբաղմունքին ծանոթանան գործատուի մոտ ընկերությունում, արտադրությունում կամ ստեղծել իրական միջավայր, որտեղ բացահայտվում է մասնագիտությունը իր աշխատանքային գործընթացից մինչև տարբեր իրավիճակներում մասնագետների վարքագծի դրսևորում:

- Ի՞նչ նոր հնարավորություններ են ստեղծվում ուսանողների մասնագիտական կողմնորոշման համար MR տեսանյութերի կիրառման տեսանկյունից:
- MR տեսանյութերի ինտեգրումը լայն

հնարավորություններ է ստեղծում բարելավելու ՄԿՈՒ գործընթացները, հատկապես կարիերայի կողմնորոշման ծառայություններում: Հետագա փուլում մեծ տեսանյութերը կարող են ինտեգրվել նաև ՄԿՈՒ ուսուցման գործընթացներին, օրինակ՝ փափուկ հմտությունների զարգացման տեսքով: Գնահատումը ցույց տվեց մեծ հետաքրքրություն զարգացնելու կարողություններ և հմտություններ AR, MR, VR տեսանյութերի մշակման հարցում: Սա հնարավորություն կտա տեղում մշակել տեսանյութեր, որոնք կարող են ինտեգրվել ՄԿՈՒ կարիերայի ուղղորդման և ուսուցման գործընթացներին: Մնացած հարցերը ծագում են ՄԿՈՒ-ում մեծ տեխնոլոգիաների պոտենցիալ պահանջարկի, ինչպես նաև ապագայում մեծ տեսանյութերի ֆինանսավորման և պահպանման հետ կապված: Հաշվի առնելով վերը նշվածը՝ որոշվեցին փորձարկել 360° MR տեսանյութը կարիերայի ուղղորդման համար, որպես հյուրանոցներում բարդ իրավիճակային սցենարներ ցուցադրելու միջոց, որոնք դժվար է բացատրել պատկերներով, բառերով կամ նույնիսկ սովորական տեսանյութով: Իրավիճակների ընտրությունը պայմանավորված էր զբոսաշրջության մասնագիտության դուրս ուսուցման ծրագրով: Ձուգահեռ ՄՀՁ ՄԿՈՒ ԳՄՀԸ ծրագիրը ձեռք բերեց 15 հատ Oculus վիրտուալ իրականության ակնոցներ, որոնք կտրամադրվեն ՄԿՈՒ հաստատությունների կարիերային կենտրոններին: Բացի այդ՝ ինտեգրվեցին իրականացվեց 3-օրյա վերապատրաստում ՄԿՈՒ հաստատությունների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի 26 մասնագետների համար տվյալ տեխնոլոգիան և գործիքակազմը կիրառելու նպատակով: Տեսանյութը վիրտուալ տարրերով կաջակցի թիրախային խմբին զգալու իրական հյուրանոցում աշխատանքային միջավայրի ներուժը և որոշում կայացնելու ապագա մասնագիտության վերաբերյալ:

Հեղինակ՝ ԳՄՀԱՆՆԻՍՅԱՆ

Նախագիծ

Փոփոխություններ՝ բուհերի ընդունելության կարգում

ԳԿՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի) կարգում փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է կրթության ոլորտում ընթացող բարեփոխումներից, մասնավորապես՝ պայմանավորված հանրակրթության պետական չափորոշիչի ներդրմամբ, ինչպես

նաև ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության գործող կարգի որոշ դրույթների վերանայման հանգամանքից:

Համաձայն հիմնավորման՝ Հանրակրթության պետական նոր չափորոշիչը հենված է սովորողների մոտ հմտությունների և կարողությունների զարգացման սկզբունքի վրա: Հանրակրթության ոլորտի բարեփոխումներն իրականացնելիս հաշվի են առնվել միջազգային լավագույն փորձը, և դրա հաջողված մեխանիզմները մեր երկրում կիրառելու պրակտիկան:

2024 թվականին նախատեսվող պետական ավարտական քննությունների կազմակերպման գործընթացում նախատեսվում է Տավուշի մարզի 12-րդ դասարանի սովորողների գիտելիքները ստուգել նաև նոր չափորոշիչի շրջանակում ուսումնական վերջնարդյունքները ստուգող և միջազգային ստուգատեսի թեստերի բովանդակությամբ թեստերի միջոցով ևս, որի հիմքում բնագիտական քննությունների մասով կլինեն նաև լաբորատոր-գործնական աշխատանքների մասին կարգավորումներ: Թեստերի միջոցով կստուգվեն հանրակրթության պետական չափորոշիչի ներդրման վերջնարդյունքները:

Նախագծով 2024/2025 և 2025/2026 ուսումնական տարիների ընդունելության համար ամրագրվել են նաև «Արարատյան բակալավրիատ»-ի քննությունները՝ հաշվի առնելով ընթացիկ ուսումնական տարվա շրջանավարտների ակնկալիքները, որոնց համար մրցույթը կիրականացվի «Արարատյան բակալավրիատ»-ին հատկացված նպատակային տեղերի շրջանակում մինչև հանրակրթության նոր չափորոշիչի ամբողջական ներդրումը ՀՀ ողջ տարածքում:


Նախագծով ընդունելության կարգում առաջարկվում են մի շարք տեխնիկական բնույթի փոփոխություններ: Այսպես, հստակեցվում են ընդունելության քննություններին և մրցույթին մասնակցելու համար հայ-

տագրվողների շրջանակը, շեշտադրվում է ոչ թե քաղաքացիության, այլ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների ուսումնական հաստատությունների նախորդ և ընթացիկ տարվա շրջանավարտ լինելու հանգամանքը:

Փոփոխությունները պայմանավորված են նաև ԳԹԿ-ի կողմից քննությունների կազմակերպման պրակտիկայով: Գործող իրավակարգավորմամբ՝ կազմակերպիչներն ըստ քննական կենտրոնների մշակակվում էին ԳԹԿ ներկայացուցչի՝ նախորդ օրը կազմակերպած վիճակահանության միջոցով: Նոր իրավակարգավորմամբ քննական գործընթացի վերահսկողությունն ամբողջությամբ դրվում է ԳԹԿ տնօրենի և քննական կենտրոնի ղեկավարի վրա: ԳԹԿ տնօրենն է բաշխում ԳԹԿ ներկայացուցիչներին, ինչպես նաև կազմակերպիչներին ըստ քննական կենտրոնների, այլ ոչ թե վիճակահանությունը: Միաժամանակ նախատեսվում է մուտքի կազմակերպիչների կողմից դիմորդի մոտ մետաղորսիչով հետախուսի և էլեկտրոնային այլ սարքերի առկայության ստուգումը:

Սահմանվել է նաև, որ ներբուհական քննությունների համար ևս դրական են համարվում 7.5 և բարձր միավորները՝ նախկին 8-ի փոխարեն:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ




Նահապետ ՔՈՒՉԱԿ Հայրեններ

Ես աչք ու դու լոյս, հոգի՛,
առանց լոյս աչքըն խաւարի.
Ես ձուկ ու դու ջուր, հոգի՛,
առանց ջուր՝ ձուկըն մեռանի.
Երբ գծուկն ի ջըրէն հանեն
եւ ի այլ ջուր ձըգեն, նայ ապրի,
Երբ գիս ի քենէ գատեն՝
քան զմեռնելն այլ ճար չի լինի:

Ով որ ճերմակ ծոց ունի՝
թող կապոյտ շապիկ հագընի.
Կոճակն այլ արծակ թողու,
ով տեսնու՝ սըրտիկն արունի.
Երթան աղաչեն զաստուած,
լեղակին հունտըն հատանի.
Ո՛չ նա այլ կապոյտ հագնի,
ո՛չ մանկան սիրտըն արունի:

Քո ծոցդ է ճերմակ տաճար,
քո ծըծերդ է կանթղ ի վառ.
Երթան ես ժամկոչ ըլլամ,
զամ լինիմ տաճրիդ լուսարար:
- Գընա՛, ծօ տըղայ տըղմար,
չի վայլես տաճրիս լուսարար.
Երթաս դու խաղով լինաս,
ու թողուս տաճարս ի խաւար:



Օմար ԽԱՅԱՍ Քառյակներ

Այն փոշին, որ տրորում ես քո ոտքի տակ,
Եղել է մի արեւադեմ, լոյս Արուսյակ,
Զգույշ սրբիթ քեւքով փոշին քո երեսից,
Ո՛վ գիտե, նա ո՞ր նագելու դեմքն է ճերմակ...

Ես մեծ գավերով գինին կխմեմ,
Երկու գավ ավել ինձ կնվիրեմ,
Նախ... ապահարզան կտամ իմ խելքին,
Իսկ հետո գինուն կնութայն կառնեմ...

Այս կուժն՝ ինձ պես սիրով տարված է եղել,
Սիրունի սեւ ծամին գերված է եղել,
Կժի վզին փարված այս կանթը սիրուն,
Ձեռք է, որ իր յարին փարված է եղել...

ՍԱԱԴԻ

Գոլեստան (հատված գրքից)

Արաբական թագավորներից մեկին պատմեցին Լեյլու եւ Մեջնունի սիրահարության եւ Մեջնունի հոգեկան տառապանքների մասին, որ չնայած իր կատարելության ու ճարտարության, թափառում է անապատում կործանելով իր ողջ էությունն ու կամքը: Թագավորը հրամայեց կանչել Մեջնունին. սկսեց նախատել նրան, թե մարդկանցից ի՞նչ չարիք ես տեսել, որ կենդանիների բնավորությունն ես յուրացրել ես խուսափում ես մարդկանցից:

...Որպեսզի կարողանա իրողությունը երեւան հանել, թե ինչու է Մեջնունն ասում՝ «Սա նա է, որի համար դուք ինձ նախատում էիք», թագավորը որոշեց Լեյլու դեմքը անծամբ տեսնել իմանալու համար, թե ինչ գեղեկության տեր է նա, որ այս մարդու թժբխտության պատճառն է դարձել: Հրամայեց գտնել եւ իր մոտ բերել: Նրան գտան վրանաբնակ մի ցեղի մեջ եւ տարան պալատ՝ թագավորի մոտ:

Թագավորը նայեց նրա վրա, որ մի թխադեմ ու նիհար աղջիկ էր, եւ աչքին բավական տգեղ թվաց, քանի որ իր հարեմի ամենատգեղ մաժիտն անգամ նրանից ավելի գեղեցիկ էր ու ավելի լավ պնդված:

Մեջնունը ուշիմությամբ հասկացավ թագավորի միտքը եւ ասաց.
- Ով արքա, Մեջնունի աչքերով պիտ նայես Լեյլու գեղեցկության վրա, որպեսզի մեր սիրո գաղտնիքը թեզ համար պարզ լինի:

Թարգմանությունը՝ Ա. Մելիք-ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Վիլյամ Շեքսպիր Սոնետներ

XXIII

Ինչպես որ անփորձ դերասանն է իր դերը մոռանում՝
Երկչոտությունից աղավաղելով բառերը սերտած,
Կամ ինչպես մի խեղճ, որ լցված է մի մոլուցքով անհուն,
Եվ մույն մոլուցքից տկարանում է նրա սիրտն հանկարծ,
Այդպես նաեւ ես՝ մոռանում եմ միշտ բառերով ասել
Այն, ինչ վայել է մեր սիրո ամեն ծեսին ու կարգին,
Եվ իմ սրտում էլ՝ վախենում եմ, թե սերն է պակասել,
Ուսերին է երբ զգացմունքներիս ծանրությունն անգին:
Օ՛, այդժամ թող իմ գրքերը լինեն պերճախոսություն
Եվ դառնան անխոս սուրհանդակները իմ խոսուն կրքի,
Որ հայցում է սեր եւ ամենուրեք փնտրում հատուցում.-
Պերճախոս լեզուն անգամ նրանց հետ երբեք չի մրցի:
Սովորի՛ր կարդալ, ինչ գրել է իմ սերը լռակյաց,
Քանզի աչքերով լսելը սիրո շնորհն է անանց:

XXIV

Իմ աչքերն, ինչպես հմուտ մի նաղաշ, պատկերել են թեզ՝
Քո պերճությունը անմահացնելով սրտիս կտավին,
Իմ մարմինը այն շրջանակն է, ուր քո պատկերն է հեզ,-
Հեռանկարն է հմուտ նկարչի ձիրքը տակավին:
Քանզի նրա մեջ դու պիտի տեսնես հմտությունը իր,
Որպեսզի գտնես այնտեղ նկարված կերպարանքդ ճիշտ,
Այն, որ իմ կրծքի սենյակում կախված կտավն է ընտիր,
Ուր պատուհաններն աչքերիդ լույսով ողողում են միշտ:
Տես, թե ինչ բարի գործ են կատարել աչքերն աչքերին՝
Իմ աչքերը քո պատկերն են գծել. քոնը ինձ համար
Պատուհաններ են իմ կրծքի վրա, ուր լուսաբացին
Լուռ հիացմունքով արեգակն է թեզ նայում անդադար:
Բայց աչքերն իրենց հմտությամբ հանդերձ միայն կդիտեն.
Պատկերում են այն, ինչ տեսնում են սուս-սի՛րտը չգիտեն:



Ռաբինդրանաթ ԹԱԳՈՐ

Ես հիշում եմ մեր առաջին հանդիպման օրը:
Ինչի՞ մասին էր այնժամ երգում սրինգը:

Նա երգում էր. «Ես հանդիպեցի նրան, ով հեռու էր ինձանից: Ես որսացի ամորսալին, ես ինձ փառեցի հավերժ անգրկելին»:

Ուրեմն ինչն է չի երգում հիմա իմ սրինգը:

Որովհետեւ ես մինչեւ վերջ չընկալեցի հավերժական ճշմարտությունը: Ես մտածում էի՝ մենք այլևս միասին ենք, չէի զգում, չէի հասկանում, որ նա նաեւ... հեռու է ինձանից: Որովհետեւ ես ճանաչեցի սիրո մի եզրը միայն՝ միացումը, եւ չէի տեսել մյուս եզրը՝ անջատումը: Ես մոռացել էի, որ հեռավորին ձգտելու անհամբեր տենչերից զրկված հանդիպումները հանդիպումներ չեն, եւ մերձավորությունը մեզ համար դառնալու է պատճառ:

Անընդգրկելի տարածության մեջ, որ բաժանել է երկու սրտերը, լռություն է. լսելի չեն խոսքեր: Միայն սրինգին է վիճակված օրորել այդ մեծ լռությունը: Բայց չեն հնչում նրա երգերը, որովհետեւ երկու սրտերը այլևս չունեն ազատություն:

Մեզ բաժանող տարածությունը լցված է մռայլով, խաթարված է առօրյա խոսքերի, մանր գործերի ախտով, ներփակված է մշտատես հոգեթրի եւ տագնապների ծանծա-

րույթով:
Պատահում է՝ լուսնի փայլով օձուն գիշերվա մեջ փչում է հովը, եւ արթնանում եմ, սիրտս տնջում է այն մտքից, թե ես վերջնականապես կորցրեցի նրան, ով իմ կողքին է:

Ինչո՞վ կավարտվի մեր անջատումը: Կխաչվի՞ կրկին նրա անսահմանությունն իմինի հետ: Ո՛վ է նա, ում հետ ես խոսում եմ ամեն երեկո՝ գործերից ազատվելուց հետո: Նա մեկն է աշխարհում իր նման հազար-հազարներից, նրա մեջ ամեն բան ճանաչելի է ինձ, ամեն բան ծանոթ է, սպառված:

Բայց ես զգում եմ՝ նրա մեջ ինչ-որ բան, որ իմն էր եւ պետք է որ ինձ լիներ, հեռացել է ինձանից: Ձեռք կբերե՞մ նորից այն՝ ցանկությունների անխնամ հոսքի մեջ:
Կգա՞ օրը, երբ նորից կգրուցեն մեր սրտերը՝ անտառային հասմիկների աստվածալուր երգերով օձուն տոնական աղջամուղջներին:

Ամձրեւն իր շղարշով լիուլի պարուրել է հորիզոնն արեւելքում: Հիշեցի Ուղջայինի բանաստեղծի (նկատի ունի 5-րդ դարի հնդիկ հայտնի բանաստեղծ եւ դրամատուրգ Կալիդասին, որն ըստ ավանդության ապրել է Ուղջայինի

Լրաբեր ամպ



քաղաքում - Գ.Մ.) տողերը: Եվ խորհեցի. ես էլ լրաբեր չուղարկե՞մ իմ սիրեցյալին:

Թող թռչի իմ երգը: Թող թեւավորվի մեր օտարացման վիհի վերելում:

Թող լողա իմ երգը ժամանակի հոսանքին հակառակ: Թող հասնի մեր առաջին հանդիպման հեռավոր օրվան, օր՝ լուսավոր տազնապով լի, որի մասին այնժամ երգում էր սրինգը, օր՝ փեղկված անձրեային հոսքերի հեծկտանքով, օր՝ համակված տիեզերքի անհաշիվ գարունների բույրերով, միրհող կետոկիների (բուրավետ ծաղիկներով ոչ մեծ ծառ - Գ.Մ.) հառաչներով եւ շալի (սաղարթախիտ մեծ ծառ - Գ.Մ.) ծաղկած ոստերի զվարթ ծածանումներով: Թող,

ցողվելով անձրեայից, շնկա տերեւներում արմավենիների, որ ստվեր են զգեց ամայի լճերի ափերին: Թող իմ երգը հասնի սիրեցյալիս լսելիքին այն ժամին, երբ ձգելով մազերի հանգույցը եւ ուղղելով գլխաշորը՝ սեթեւեթուն է տան օջախի մոտ:

Այսօր անեզր երկնակամարը խոնարհվեց թուխ երկրի վրա, որ պատված էր անտառների մշուշաքող կապույտով, եւ մեղմ շշջաց:

- Ես քո՞նն եմ:

- Բայց մի՞թե դա հնարավոր է,- զարմացավ երկիրը,- դու անսահման ես, իսկ ես՝ այնքան փոքր:

- Իսկ չե՞ս տեսնում,- պատասխանեց երկնակամարը,- ամպերը իմ սահմաններն են դարձրել, ես բոլորել եմ թեզ նրանց շղարշով: Ամոթխեց երկիրը.
- Դու պարուրված ես անհամար աստղերի փայլով, իսկ իմ հագուստի վրա՝ լույսի եւ ոչ մի կայծ...
- Այսօր ես կորցրել եմ ամեն բան՝ եւ լուսնին, եւ արեւին, եւ աստղերին, եւ ահա ես փարվել եմ թեզ:

- Իմ սիրտը լիքն է արցունքով եւ դողում է ամեն շնչից, իսկ դու անդողվելի ես:
- Օ՛, ոչ: Իմ աչքերում ես ար-

ցունքներ կան: Մի՞թե չես տեսնում: Ուր որ է, նրանք կտեղան հոսքով: Թախծոտ է իմ ներսը, ինչպես սիրտը քո...

Եվ այստեղ հորդեց արցունքների երգը՝ լցնելով երկինքը եւ երկիրը բաժանող տարածությունը, եկավ նրանց անջատման վերջը...

Թող երգի երիտասարդ անձրեւը ոգեշնչված հիմներ՝ երկրի հետ երկնքի նշանադրության պատվին, թող թափվի եւ մեր անջատման վրա...

Թող ամեն չասվածը, որ անթեղվել է սիրելիի սրտում, դողանքի, ինչպես վիհի լար: Թող սիրելին իր մուգ խոպոպների վրա գցի թողը կապույտ, լազուր, ինչպես անտառների հեռուները: Թող նրա սեւ աչքերի հայացքում հնչեն տեղատարափ անձրեւի բոլոր մեղեդիները: Եվ թող օրինյալ լինի սիրելի վարսերին հյուսված դրասանգը...

Երբ աղջամուղջը՝ բամբուկների պուրակում խտացած, ցնցվի ճռելիների դողանքից, երբ ցուրտ, խոնավ քամուց դողալով՝ մարի բոցը լամպի, - թող սիրեցյալը թողնի իր անկյունը՝ իրեն այնքան ծանոթ, եւ գա, խոտի թաց շնչառությամբ պարուրված արահետով, դեպի իմ միայնակ սրտի կարոտակեզ գիշերը...

Թարգմանությունը՝ Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆԻ

Գողթան երգերից

**

Հեծաւ արի արքայն Արտաշես ի սեւաւըն գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկեօղ շիկափոկ պարանըն
Եւ անցեալ որպէս զարծուի սըրաթեւ ընդ գետըն,
Եւ ձրգեալ զոսկեօղ շիկափոկ պարանըն՝
Ընկեց ի մէջք օրիորդին Ալամաց,
Եւ շատ ցաւեցոյց ըզմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակըն իւր:

**

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթենկանըն:



ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

**

Աշխարունըս ախ չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա.
Անմահական ջըրով լիքըն օսկե փընջան իս ինձ ամա.
Նըստիմ վըրես շըվաք անիս՝ զարբաք վըրան իս ինձ ամա.
Սուչս իմացի՛, Էնենց սըպանե՛ Սուլթան ու խան իս ինձ ամա:

Մեչկըտ սալբու չինարի պես, ռանգըտ փըռանգի ատլաս է,
Լիզուտ շաքար, պոռշըտ դանդ, ակռեքըտ մարքրիտ ալմաս է.
Օսկու մեչըն մինա արած, աչկիրըտ, ակնակապ թաս է.
Պատվական անգին ջավայիր, լալ-բաղեշխան իս ինձ ամա:

Յիս ես դարդին վո՞ւնց դիմանամ՝ մական սիրտըս ունիմ քարած,
Արտասուրբս արուն շինեցիր, խիլքըն գըլխես ունիմ տարած,
Նուր բաղ իս, նուր բաղչի մեչըն բոլորքըտ վարթով չափարած.
Վըրետ շուռ գամ բըլբուլի պես՝ սիրով սեյրան իս ինձ ամա:

Քու էշխըն ինձի մաստ արավ, յիս զարթուն իմ, սիրտս է քնած.
Աշխարս աշխարով կըշտացավ, իմ սիրտըս քիզնից սով մընաց.
Յար, քիզ ինչո՞վ թափիր անիմ՝ աշխարունըս բան չը մնաց.
Կրակե, ծովեմեն դուս էկած, ռաշ ու ջեյրան իս ինձ ամա:

Ի՞նչ կուլի մեկ հիղըս խոսիս, թե վուր Սայթ-Նովու յար իս,
Շուկըտ աշխարըս բըռնիլ է՝ արեգակի դեմըն փար իս,
Հուտով հիլ, մեխակ, դարչին, վարթ, մանիշակ, սուսամբար իս,
Կարմըրագոյն՝ դաշտի ծաղիկ, հովտաց շուշան իս ինձ ամա:

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Թմկաբերդի առումը (հատվածներ)

...Իրան, Թուրան ողջ եկել են,
Թաթուլն անհաղթ, անընկուն,
Ջորք ու բաբան խորտակվել են,
Նըրա բերդը միշտ կանգուն:

Ու միշտ ուրախ, հաղթանակով
Իր ամրոցն է դառնում նա.
Սպասում է էնտեղ կինը,
Ջահել կինը սեւաչյա:

...Էն տեսակ կին,
Ես իմ հոգին,
Թե աշուղն էլ ունենար,
Առանց գեների,
Առանց գորքի
Շահերի դեմ կըզընար:

Սիրո հընոց,
Կրակ ու բոց՝
Էնպես աչքեր թե ժըպտան,
Մարդու համար
Օրվա պես վառ
Գիշերները լույս կըտան:

Վարդի թերթեր՝
Էնպես շուրթեր
Թե հաղթություն քեզ մաղթեն,
Էլ քեզ ո՛չ Շահ,
Ո՛չ ահ ու մահ,
Ո՛չ գենք ու գորք կըհաղթեն:

...Ծով են աչքերը Ջավախքի դըստեր,
Ու կորչում է մարդ Նըրա հայացքում,
Ճակատը ճերմակ էն ձյունից էլ դեռ,
Որ բարձր Աբուլի գագաթն է ծածկում:
Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,
Նըրա սիրովն է հարբած էն հըսկան,
Նըրա ժպիտն է քաջին ուժ տալի,
Որ դաշտն է իջնում առյուծի նըման:



Պետրոս ԴՈՒՐՅԱՆ

Սիրել

Բոյլ մը նայուածք՝ փունջ մը ժըպիտ՝
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ:

Ես ուզեցի լուռ մենամալ,
Սիրել փըրթիք՝ խորշեր թաւուտ,
Սիրել կայծերն երկնի կապուտ,
Առտըւան շաղն՝ իրիկուան բալ՝
Ճակատագրիս սեւ գիծ կարդալ՝
Խոկալ՝ սուզիլ՝ ըզմայլիլ սուտ:

Ո՛հ, խուրձ մը վարս՝ եղեմ մը շունչ՝
Շրջագգեստ մը շրշեց իմ շուրջ:

Ես ուզեցի լոկ ու մենակ
Սըրտակցել ջինջ վըրտակին հետ,
Յիշատակի չունի նա հետ,
Սիրտ մ'որոյ մինչ սուզիմ յատակ,
Գըտնեմ գիս հոն դժգոյն յատակ,
Գաղտնի՞ք մ'ունի-այն անթիւ վետ:

Եթեր մը տրոփ արտի լսեցի,
Հծծեց.- «Կ'ուզե՛ս, սիրտ, եկ ինձի»:

Ես ուզեցի սիրել գեփիւռ,
Որ երկնքէն թըռչի բեկբեկ,
Նա չը սիրեր խոցել երբէք,
Հոգի՛ մ'որոյ գաղտնիքն է բոյր,
Գիտէ շոյել երազներ բիւր,
Երկնի բոյրն յուշ կ'աճէ առ հեք:

Ո՛հ, փունջ մը բոց փըսփըսաց ինձ.
- «Կ'ուզե՛ս պաշտել հոգի մ'անբիծ»:

Ես ուզեցի քընարով մի
Լոկ սիրել հոս՝ հոս դալկահար,
Պաշտել՝ գրկել միայն քընար,
Սիրող էակ ճանչել զանի,
Ըստ իմ քըմաց լարել աղի
Եւ սրտակցել սիրողաբար:

Նէ մօտեցաւ յուշիկ՝ ըսաւ.
- «Քնարդ է ցուրտ սիրտ, եւ սերդ՝ ցաւ»:

Թօթուեց թեւերն հոգիս մոլար,
Ճանչեց ըզմէ, գեղ ու կըրակ՝
Սիրտն անապակ, ինչպէս վտակ՝
Անմեղ՝ ինչպէս սիւզ դալկահար՝
Հաւատարիմ՝ ինչպէս քընար,
Հրաժեշտ տըւաւ կեանքի մենակ:

Բոյլ մը նայուածք՝ փունջ մը ժըպիտ՝
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ:

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

**

Թարթիչներդ շուք կտան
Դեմքիդ վրա թավիչե.
Սիրտս շուքի տակ անուշ՝
Ծվար մտած կերագե:

Թաթիկներդ լուսեղեն,
Լույս թընկիկներ հեքիաթի,-
Ճաճանչներով ոսկեղեն
Բույն կ'իյուսեն նոր բայտի:

Ձմրուխտ թասով գինի ես,
Բույրդ աշխարհ է առել,
Շուրթս վառվեց շրթներդ,
Աշխարհիս տերն եմ դառել:



Վահան ՏԵՐՅԱՆ

**

Սիրում եմ աչքերիդ տխրությունը խորին,
Անաղմուկ խոսքերիդ դաշնակները հիվանդ,
Կուսական ամոթխած փայփայանքըդ, որ իմ
Սեւ օրերն է օրրուն խնդությամբ հնազանդ:

Խոսքերդ կարկաչող, որպես նուրբ մի գգեստ,
Ստվերում են արտիդ գաղտնիքները սիրուն,-
Քո հոգին չի սիրում մերկություն անհամեստ,-
Դու այնպես ես սիրում, կարծես թե չես սիրում:

Հեռավոր երկրի պես հմայող է հոգիդ,
Անուշ են խոսքերդ, ժպիտներդ աղջկա,-
Մանկական անպաճույճ երգի պես միամիտ,
Դյութական, որպես այն, որ չըկա, որ չըկա...

Միսաք ՄԵԾԱՐԵՆՑ

Երագ օրեր

Կարմիր ծաղիկ մը գարունի
Առտու մ'իմո՛ի նըվիրեցիր.
Ըզգացի թե տենդեր ունի
Երագկոտ միտքըս ուշացիր:

Եվ ըղձակաթ իմ հեգ հոգիս
Ըզգաց սիրտիդ հուրքըն արծարծուն,
Ու մետաքսե ուղի մը գիս
Մեր-Ծաղիկին տարավ ածուն:

Խանդաղատանք մը հորդեցավ
Իմ նըվաղկոտ լանջքիս տակ՝ ուր
Դողաց սիրո սարսուռն անցավ՝
Ու թովանքը համբույրին հուր:

Հոն ժըպտեցավ կյանքը ինձի,
Հըմայքներու հույլովն անցավ,
Եվ ուրվական մը կասկածի
Անոր մոտեն երբեք չանցավ:



Եղիշե ՉԱՐԵՆՑ

**

Լուսամփոփի՛ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով, Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի՛ պես երազի, Կապույտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով, Լուսամփոփի՛ պես աղջիկ...

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին, Որ չմարի իմ հոգին քո ակաթե աչքերում. Ես ի՞նչ անեմ, որ մնա ծիածանը երեքգույն, Որ չցնդի, չմարի՛ իմ հոգու հեռուն...

Լուսամփոփի՛ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով, Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի՛ պես երազի, Կապույտ աղջիկ, ակաթի ու կաթի՛ պես հոգեթով, Լուսամփոփի՛ պես աղջիկ...



Հովհաննես ՇԻՐԱԶ

Հայաստանի աղջիկները

Հուրն են սիրո սեւի սիրուն լույս աղջիկներն Հայաստանի, Սրտիս վրա քայլող գարուն՝ կույս աղջիկներն Հայաստանի, Իմ սիրտն ի՞նչ է, ախ, թե ուզեմ՝ բերդեր կառնեն մի հայացքով, Անառիկ բերդ ու սիրո սյուն՝ հույս աղջիկներն Հայաստանի:

Մեկը մեկից պարզ ու կախարհ, մեկը մեկից խոսքով քաղցր, Ետ կբերեն ալեւորին, օձ կթովեն աչքով քաղցր,- Մեկը՝ աստղիկ, մեկը՝ լուսնյակ, մեկն՝ արեւի տեսքով քաղցր,- Իմ Հայաստանն են զարդարում նուրբ աղջիկներն Հայաստանի:

Ու չգիտեմ՝ որի՞ն սիրեմ, որի՞ն թողնեմ անհագ սրտով, Ամենքին է սրտիս աչքը արեւի պես կրակ սրտով, Երբ հուր ծովի պես են քաշում՝ ո՞նց դիմանաս վտակ սրտով,- Ինձ աստղերից ցած են բերում սուրբ աղջիկներն Հայաստանի:

Իմ Սեւանը ո՞նց ցամաքեց, երբ սեւածով աչքերը կան, Իրենց նման հարբեցրնող գինին քամող ձեռքերը կան,- Վարդ շուրթերին բուրմունքի պես Կոմիտասի երգերը կան,- Քարից անգամ լույս են քամում բյուր աղջիկներն Հայաստանի:

Բայց մի գանգատ ունի կյանքս՝ այն, որ ինձ մի վարդ չտվին, Սուրբ են Արա Գեղեցիկի պես՝ ինձ մի սուրբ Նվարդ չտվին, Ինձ թողեցին գիրկն ընկածի, դեռ ասում են՝ դարդ չտվին,- Գերեզմանս են աչքով փորում զուր՝ աղջիկներն Հայաստանի:

Առանց նրանց՝ երգս պաղ էր՝ արեւ բացին իմ երգի մեջ, Նրանց սիրո ձեռագործն է ծիածանը երկնքի մեջ,- Բայց քաջ կասեմ՝ մեկին սիրես, լավի՛ն սիրես ու լավ սիրես, Որ քեզ պաշտեն բոլո՛ր սիրուն, լույս աղջիկներն Հայաստանի:

Պարույր ՍԵՎԱԿ

ԴՈՒ

Դո՛ւ՛ երկու տա՛ն, Դո՛ւ՛ հասարա՛կ մի դերանուն, Եվ ընդամենն այդ քո երկու՛ հատիկ տառով Այս բովանդակ աշխարհին ես ինձ տեր անում...

Դո՛ւ՛ երկու տա՛ն, Ու ես գարնան հողի նման Քո կենսատու ջերմությանն են ընտելանում...

Դո՛ւ՛ երկու տա՛ն, Եվ ահա ես Երջանկության համն են զգում իմ բերանում, Անջատումին ըմբերանում Եվ թերանում են կատարել հրամանը տառապանքի...

Դո՛ւ՛ երկու տա՛ն, Ու ես, անգի՛ն, Ինձանից ինքըս վերանում Փոշիացած հերոսների Ու ծնվելիք հանճարների Դասակին են ընկերանում...

Դո՛ւ՛ երկու տա՛ն, Ու երբ հանկարծ Թողնում ես ինձ ու հեռանում Լքված տան պես ճեղք են տալիս, Ծեփըս թափում, անտերանում, Եվ կսկիծը, ցեցի նման, Բույն է դնում իմ սյունի մեջ, Ձեղունի մեջ ու գերանում...

Դո՛ւ՛ երկու տա՛ն, Դո՛ւ՛ հասարա՛կ մի դերանուն...

Գուրգեն ՄԱՀԱՐԻ

Պոետ

Մի ջինջ գիշեր է եղել, Մի ջինջ գիշեր, Մայրս՝ ջահել մի եղեգ, Հայրս՝ ուժեղ:

Ու մորըս հուզել է Բարդինների երգը, Իսկ դաշտերում փիրուզե Ծղրիդներն են երգել...

Բարդիներն են երգել Ջրերի մոտ, Ամեն ինչ խորն է եղել, Ամեն ինչ հորդ:

Ախ, ծղրիդներ՝ շատախոս՝ Լուսնկայի հետ,- Ծնվեցի ձեր պատճառով Այսպես պոետ...

Հանո ՍԱՀՅԱՆ

Կգամ

Եթե մինչեւ անգամ Լսած լինես, թե ես այս աշխարհում չկամ, Միեւնույն է, կգամ, ինչ էլ լինի, կգամ, Ուր էլ լինեմ կգամ: Եթե մինչեւ անգամ ես կուրացած լինեմ, Եթե մինչեւ անգամ լույսը մարած լինի, Վերջին հույսը քամին առած-տարած լինի, Առանց լույսի կգամ, ես այս անգամ կգամ Մենության մեջ լացող երգիդ վրա:

Եթե մինչեւ անգամ Քո հավատի հանդեպ դու մեղք արած լինես Եվ համարած լինես, որ աշխարհում չկամ, Եթե մինչեւ անգամ հողս մաղած լինես, Եթե մինչեւ անգամ մտքով թաղած լինես, Եթե մինչեւ անգամ ինձ վտարած լինես Վերհուշերիդ վերջին խոնավ քարանձավից, Միեւնույն է, կգամ, ինչ էլ լինի, կգամ, Եվ կճչաս հանկարծ տարօրինակ ցավից... Կգամ, գլուխ-գլխի ու ձեռ-ձեռքի կտանք, Լաց կլինենք մեռած մեղքիդ վրա:

Եթե մինչեւ անգամ հազար սարի ետեւ Հազար կապով կապված, խաչով խաչված լինեմ, Տքնած-տանջված լինեմ, միեւնույն է, կգամ: Ինչ էլ լինի, կգամ, չկանչես էլ, կգամ, Եվ կբերեմ ես քեզ ուրախություն մի մեծ Անակնկալ դարձիս իրողությամբ- Քո տան ու քո հոգու տարողությամբ, Երազներիդ, կյանքիդ տեւողությամբ: Կգամ եւ կդառնամ զտած բախտի ժպիտ Եվ հավատի ժպիտ՝ տառապանքից մաշված, Արտասուքից խաշված դեմքիդ վրա:

Եթե մինչեւ անգամ մեջքս ծալված լինի, Եթե մինչեւ անգամ ոտքս վառված լինի, Եվ ճակատիս հազար հողմի հարված լինի, Միեւնույն է, կգամ, ուր էլ լինեմ, կգամ: Գետնի տակից կգամ, Մի հեռավոր անհայտ մոլորակից կգամ: Կգամ ու թափ կտամ Հարդագողի փոշին շենքիդ վրա:



Ալիսիա ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

**

Սերը գոյության հանճարն է. սիրո հակառակն ամենեւին էլ չսիրելը չէ, այլ՝ մահն է պարզապես: Սիրահարները անմահությունն են վերանորոգում:

Խորհուրդներ մայրերին. Ժողովրդական բժշկության գանձարանից

Դարեր շարունակ ժողովրդական բժշկությունն ապացուցել է իր արդյունավետությունը գանձարան հիվանդությունների կանխարգելման և բուժման հարցերում: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ժողովրդական բժշկությունը առողջության հետ կապված տարբեր մոտեցումներ, գիտելիքներ ու հավատալիքներ, ինչպես նաև բուսական, կենդանական, հանքային ծագում ունեցող դեղորայքային միջոցներ ներառող համալիր է, որն առանձին կամ համակցված ձևով կիրառվում է հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և բուժման նպատակով: Ժողովրդական բժշկությունն այլ կերպ անվանում են «այլընտրանքային» կամ «ավանդական»: Այն կապված է աշխարհագրական որոշակի տեղանքի հետ և, որպես կանոն, բանավոր ձևով ավանդաբար փոխանցվում է ուսուցչից աշակերտին:

Այս ձեռնարկի խորհուրդները հիմնված են ժողովրդական բժշկության գիտելիքների վրա և հաստատված են իմ բազմամյա բժշկական պրակտիկայով: Հուսով եմ, որ դրանք կօգնեն երիտասարդ մայրերին զերծ պահել երեխաներին մի շարք հիվանդություններից, թեթևացնել դրանց ընթացքը և խուսափել բարդություններից առանց քիմիական դեղամիջոցներ օգտագործելու, որոնք կարող են խաթարել երեխաների դեռևս չծեղված և խոցելի իմունային համակարգը:

Սիրելի մայրիկներ, հիշե՛ք, որ ձեր երեխայի առողջության հիմքը դրվում է վաղ տարիքից, և այդ գործում զլխավոր պատասխանատուն դուք եք:

Նորածինների և կրծքի երեխաների խնամքը

Երեխայի առողջության հիմքը դրվում է նրա ծնվելուց շատ ավելի վաղ՝ դեռևս մինչև բեղմնավորումը: Այն ուղղակիորեն կախված է ծնողների առողջությունից, ինչը մեծապես պայմանավորված է առողջ ապրելակերպով: Ծնողների ֆիզիկական, հոգեկան և հոգեւոր առողջությունը երեխաների առողջության գրավականն է: Մեզ հայտնի բոլոր կրոնները մեծ պատասխանատվությամբ են վերաբերում ամուսնությանը և նոր մարդու արարման խորհրդին: Ամուսնական կարգի, նախա-և հետամուսնական ծեսերի հիմքում ընկած է առողջ ընտանիք ստեղծելու, սերունդները բնածին և ժառանգական հիվանդություններից զերծ պահելու նպատակը:

Կյանքի առաջին օրերը

Կյանքի առաջին օրերը ամենաբարդն են նորածնի համար: Հատկապես այդ շրջանում նա ունի խելահիտ խնամքի կարիք, քանի որ լիովին կախված է իրեն շրջապատող միջավայրից և պայմաններից: Ոչ բավարար ուշադրությունը, խնամքի հարցերում նույնիսկ փոքր սխալները կարող են անդրադարձնել երեխայի առողջության վրա և խորը հետք թողնել նրա կյանքում: Որպեսզի հասկանաք, թե ինչ է անհրաժեշտ նորածնին, փորձեք ձեզ պատկերացնել այդ փոքրիկ էակի դերում և ստեղծել նրա կյանքի համար հարմարավետ պայմաններ: Պատկերացրեք, որ տաք պտղաջրերով լցված անոթում մթության և լույսի անցմանը մեջ 9 ամիս անցկացնելուց հետո դուք հայտնվել եք կուրացնող լույսով աղմուկով միջավայրում՝ ձեզ անծանոթ էակների շրջապատում: Լույս աշխարհ գալուց հետո կտրուկ աճում է ճնշումը նորածնի բոլոր զգայարանների վրա: Կյանքի առաջին իսկ րոպեներից երեխային անհրաժեշտ է պաշտպանել լուսային, ծայրային, շոշափողական և հոստառական գրգռներից՝ բացառելով աղմուկը, բարձր ձայները և վառ լույսը: Երեխայի սենյակը պետք է փոքր-ինչ մթնեցնել և ստեղծել մեղմ և հանգիստ մթնոլորտ:

Հնում բժիշկները խորհուրդ էին տալիս երեխայի կյանքի առաջին օրերին օրորոցի և լույսի աղբյուրի միջև մուգ գույնի շոր կախել:

Ցանկալի է նորածնի ներկայությամբ չխոսել լարված տոներով և տխուր թեմաներով, քանի որ նա բնազդաբար զգում է դա և ենթագիտակցորեն բուռն կերպով արձագանքում: Ժողովրդական ավանդույթների համաձայն՝ առաջին 40 օրը նորածնին պետք է զերծ պահել այցելուներից և, հատկապես, դաշտանի շրջանում

գտնվող և նոր ծննդաբերած կանանցից:

Կյանքի առաջին ամիսներին երեխան իրեն անհանգստացնող ցանկացած բանի մասին լացով է իմաց տալիս: Մայրը պետք է նրբազգաց լինի, որպեսզի հասկանա լացի պատճառը: Կարճատև «սուկ լացը» կերակրումից առաջ վնասակար չէ կրծքի երեխայի համար: Երեխային կերակրելու համար նրան օրորոցից կտրուկ շարժումով մի՛ վերցրեք: Երբ վատ տրամադրության մեջ եք, աշխատե՛ք երեխային չմոտենալ, առավել ևս չկերակրել նրան այդ վիճակում: Երեխան բնազդաբար զգում է իրեն շրջապատող ամեն բան, առավել ևս՝ մոր տրամադրությունը: Մի խոսքով, մենք պետք է օգնենք նորածնին հարմարվել նոր միջավայրին՝ այն հնարավորինս մոտեցնելով նախածննդյան վիճակին: Թեթևակի օրորելը և մոր երգած օրորոցայինը մանկիկի համար դրախտային հաճույքներ են:

Քունը

Լիարժեք քնելու ունակությունն առաջանում է նորածնի քառասունը լրանալուց հետո: Մինչև այդ, նա օրվա մեծ մասն անցկացնում է կիսաքնած վիճակում: Ամեն 2-6 ժամը մեկ նա արթնանում է կերակրվելու համար, ապա կրկին մտնում մեջ մտնում: Քունը օրվա ընթացքում բաշխվում է հավասարաչափ: Հնուց նկատվել է, որ երեխան ծիծաղելու ունակությունը ձեռք է բերում քնելու ունակությանը զուգահեռ: Կարծիք կա, որ դա զարմանքի յուրահատուկ դրսեւորում է, որը կապված է նրա հետ, որ քնի մեջ նորածինը տեղափոխվում է անցյալ կյանք, և, վերադառնալով իրական կյանք, զարմացած արթնանում:

Սկսած 3 ամսականից, երբ երեխան գիշերն արթնանում է, նա արդեն կարող է արթուն մնալ՝ չանհանգստացնելով ծնողներին: Վեց ամսական հասակում նա օրվա մեջ դեռ քնում է մոտ 12 ժամ, բայց արդեն կարող է արթուն մնալ մի քանի ժամ շարունակ՝ մարգելով վերջույթները և ձեռք բերելով նոր կյանքի հմտությունները: Դարոցական տարիքից երեխան արթուն է լինում ամբողջ ցերեկը: Այսպիսով, բազմափուլ քունը փոխարինվում է միանգամայն քնի ռեժիմով:

Եթե երեխան քուն մտնելուց առաջ պտտվում է անկողնում և քնում է որոշակի դիրք ընդունելուց հետո, ապա մահճակալի դիրքը պետք է փոխել ըստ նրա ընտրած ուղղության: Երեխայի մարմինը կողմնացույցի սլաքի պես բնազդաբար ընտրում է հանգիստ քնի համար առավել հարմար դիրքը երկրի մագնիսական դաշտի նկատմամբ: Եթե երեխան գիշերը բացվում է և մի կողմ գցում վերնակը, պետք է փորձել ավելի բարակ վերնակով ծածկել նրան: Եթե դա էլ չօգնի, վերնակով ծած-

կեք միայն երեխայի իրանը՝ բաց թողնելով ոտքերը և ձեռքերը: Դրանով դուք կնվազեցնեք մրսելու վտանգը:

Ջուրը երեխայի կյանքում

Ջուրը կազմում է մարդու մարմնի զանգվածի մոտ 2/3-ը: Այն մշտապես շրջապատույտ է կատարում բնության մեջ և կենդանի էակների օրգանիզմում՝ հյուսվածքներին և բջիջներին հասցնելով սննդարար նյութեր և հեռացնելով կենսագործունեության արգասիքները: Հասուն մարդու օրգանիզմում հեղուկային միջավայրերի լվացման համար օրական օգտագործվում է 2-5 լիտր ջուր, իսկ տաք կլիմայի պայմաններում և ֆիզիկական ակտիվության դեպքում՝ շատ ավելի: Կրծքի կաթով սնվող երեխան ստանում է իրեն անհրաժեշտ ջրի ամբողջ քանակը: Հնում բժիշկները երեխայի օրգանիզմը համեմատել են ծղոլ սերմի հետ, որը ծիլ տալու և աճելու համար մեծ քանակությամբ ջրի կարիք ունի: Այդ իսկ պատճառով, երբ երեխան անցնում է մեծի սննդակարգով սնվելուն, պետք չէ նրան արգելել խմել այնքան ջուր, որքան նա ցանկանում է: Երեխաների ջրի պահանջը շատ ավելի է, քան մեծահասակներինը:

Ներարգանդային կյանքի ամբողջ ընթացքում երեխան գտնվում է պտղապարկի տաք հեղուկ միջավայրում, որը պաշտպանում է նրան մարմնի և մաշկի վնասվածքներից: Հարպտոլային ջրերը կատարում են ամենաբազմազան ֆունկցիաներ՝ ապահովելով մայր-պլացենտա-պտուղ բնականոն գործունեությունը: Հղիության սկզբում հենց պտղի պտղապարկի բջիջներն են արտադրում պտղաջրեր: Հետագա փուլերում հեղուկը լրացուցիչ արտադրվում է երեխայի երկկամների կողմից: Երեխան նախ կուլ է տալիս ջուրը, իսկ հետո մեզի հետ միասին թողնում պտղապարկի մեջ: Ստամոքսային յուրաքանչյուր երեք ժամվա ընթացքում պտղապարկի հեղուկը ամբողջովին թարմանում է: Այսինքն «թափոններով» լի պտղաջուրը ամբողջովին փոխարինվում է նորացված պտղաջրով: Եվ այս ցիկլը շարունակվում է հղիության ողջ ընթացքում:

Թվում է, թե մարդը երկրային արարած է, և նա չի կարող շնչել ջրի տակ: Ապա, ինչպե՞ս է պտուղը հղիության ընթացքում ապրում և զարգանում հեղուկ միջավայրում: Դրա համար անհրաժեշտ է ներդաշնակ միջավայր, որն էլ հենց ջուրն է հանդիսանում: Հարպտոլային հեղուկը միշտ նույն ջերմաստիճանն ունի, ինչը նշանակում է, որ երեխան չի գերտաքանա և չի մրսի, նույնիսկ եթե մայրը տառապում է ջերմությունից կամ, ընդհակառակը, սառչում է ցրտից: Հարց է ծագում, թե ինչպե՞ս երեխան չի խեղդվում պտղաջրերի մեջ: Իհարկե մոր արգանդում գտնվող երեխան շնչում է, բայց դեռ ոչ թոքերով: Նրան թթվածինը մատակարարվում է ընկերքի և պորտալարի միջոցով: Միայն ծնվելուց և առաջին ծիչից հետո, թոքերը բացվում են, և երեխան կատարում է իր առաջին շունչը: Այսպիսով, հղի կնոջ օրգանիզմում ամեն ինչ մտածված է բնության կողմից:

Ջրային միջավայրին ձգտելը գեներտիկական պահանջ է, որը հատուկ է ամբողջ կենդանական աշխարհին: Այն հատկապես կարողանում են նորածինները, որոնց հիշողության մեջ դեռ թարմ են ներարգանդային կյանքի հետ կապված «հաճելի հուշերը»: Այ թե ինչու մանուկները ծնված օրվանից սիրում են լողանալ: Հավանաբար, հենց դրանով է պայմանավորված ջրի, լողանալու և մնացած ջրային պրոցեդուրաների բուժիչ և հանգստացնող ազդեցությունը:

Լողացնելը

Լողացնելու նպատակներից մեկը մաշկային ծակոտիների մաքրումն է: Դրանց միջոցով երեխայի մարմինն «օղակափակվում» է և մաքրվում նյութափոխանակության մնացուկներից: Լողացնելու ժամանակ չորացած քրտինքի և ճարպագեղձերի արտադրած ճարպի հետ միասին հեռացվում է նաև մաշկի եղջրացած շերտը: Դրանք թաղանթի պես ծածկում են մաշկի ամբողջ մակերեսը՝ խցանելով ծակոտիները:

Պետք է հաշվի առնել, որ ջրի հետ առաջին շփումը նորածնի համար ուժեղ ցնցում է: Նա բնազդաբար ջրից վտանգ է զգում: Անծանոթ ջրային միջավայրում երեխան նոր շոշափողական զգացողություններ է ապրում: Երեւի նկատել էք, որ ջրի հետ շփվելիս նորածինը ոտքերով և թաթիկներով անկանոն շարժումներ է անում, իսկ դեմքին վախեցած արտահայտություն է: Մեծահասակները նույնպես քնից կամ ուշազնաց վիճակից ինքնապաշտպանության բնազդով արթնանում են, երբ նրանց վրա ջուր են ցողում: Գործում է «լողալու» ինքնապաշտպանական բնազդը: Զե՛ր որ ջրում չխեղդվելու համար քնած մարդը պետք է անմիջապես արթնանա և դուրս լողա:

Նորածնին առաջին անգամ լողացնելիս անհրաժեշտ է նրան զերծ պահել սթրեսից: Փոքրիկին լողացնողի նույնիսկ անցան սխալը կարող է առաջացնել վախեր ջրի նկատմամբ, ինչը հետագայում կարող է խանգարել լողալ սովորելուն: Կան նորածնին լողացնելու պարզ կանոններ:

Նորածնին ջրի մեջ ընկնելիս՝ պետք է նրան պահել դեմքով ներքև:

Այդ դիրքում նա իրեն ավելի անվտանգ է զգում, քան մեջքի վրա, քանի որ նախապես տեսնում է վտանգը և փորձում է պաշտպանվել՝ օդում շարժելով թաթիկներն ու ոտքերը: Այս դիրքում ջրից պաշտպանված են երեխայի թե շնչուղիները, և թե ականջները: Ամեն անգամ նա ավելի ու ավելի կընտելանա ջրին և կդադարի վախենալուց: Որոշ ժամանակ անց, երբ երեխան վերջնականապես կվարժվի ջրին, կարելի է նրան լողացնել երեսնիվեր դիրքում: Այս կանոնները պահպանելու դեպքում երեխայի համար լողանալը կդառնա ամենահաճելի զբաղմունքներից մեկը:

Երեխային ցանկալի է լողացնել երկար քնից հետո և կերակրել լողացնելուց հետո:

Ամռանը երեխային կարելի է լողացնել ավելի հաճախակի և ավելի գոլ ջրով, քան ծնունդը: Լողացնելու ընթացքում երեխայի մարմինը պետք է տաքանա և վարդագույնի, որից հետո միայն կարելի է նրան ջրից հանել:

Ջրից հանելուց հետո երեխային պառկեցրեք փորկի վրա, որպեսզի շնչուղիների և ականջների մեջ մնացած ջուրը դուրս ծորա ինքնաբերաբար:

Այդ ընթացքում թեթևակի ցամաքեցրեք նրա մարմինը փափուկ սրբիչով, այնուհետև շրջեք մեջքի վրա, ցամաքեցրեք առջեւից, որից հետո հագցրեք: Հնում նորածնին լողացնելը համարվում էր սուրբ արարողություն, որը պահանջում էր հատուկ հմտություն: Դա անում էին տոհմի տարեց, փորձառու կանայք, որոնք սովորեցնում էին երիտասարդ մայրերին: Լողացնելուց հետո երեխային հաճում էին ջրից ափերով երկու կողմից գլուխը բռնած: Ջրից հանելուց հետո երեխային մի քիչ ճոճում էին օդում, ապա մի երկու անգամ թափահարում օդում, որից հետո միայն դնում սրբիչի վրա, ցամաքեցնում և բարուրում:

շարունակությունը էջ 15



Խորհուրդներ մայրերին. Ժողովրդական բժշկության գանձարանից

սկզբը՝ էջ 14

Այս գործողությունների նպատակն այն էր, որ կանխվեին ողնաշարի հնարավոր կորացումները:

Ես ճանաչում եմ ընտանիքներ, որտեղ մինչ օրս երեխաներին լողացնելիս կիրառում են «տատական» հնարքները, որոնք պաշտպանում են զանազան պաթոլոգիաներից: Դրանցից մեկը քթային խոռոչի հետին անցքերի ի ծնե փակ լինելն է, որը դժվարացնում է նորածինների քթային շնչառությունը: Դա իր հերթին կարող է երեխայի կյանքի առաջին օրերից սկսած բերել առողջության լուրջ խանգարումների: Որոշ դեպքերում հետեւանքները կարող են ողբերգական լինել, քանի որ երեխան քիթով փակ լինելու պատճառով չկարողանալով կուրծք ծծել, կարող է սովամահ լինել:

Նախկինում այդ պաթոլոգիան նորածինների շատ կյանքեր է խլել: Անցանկալի հետեւանքներից պաշտպանելու նպատակով առաջին իսկ լողացնելուց հետո երեխային ջրից հանում էին երկու մատով. ցուցամատը եւ միջամատը մտցնում էին բերանից քթմաշակ, այնտեղից էլ քթային խոռոչների հետին անցքեր: Կեռածու ծալած մատները հուսալիորեն պահում էին երեխային օդում կախված վիճակում: Այս գործողությունը վերականգնում էր երեխաների քթի հետին անցքերի անցանցիկությունը եւ վերականգնում քթային շնչառությունը: Առողջ երեխաների համար էլ սա կանխարգելիչ միջոց է, քանի որ օգնում է ազատել վերին շնչուղիները պտղաջրերի մնացորդներից: Անհրաժեշտության դեպքում այս գործողությունը կրկնում էին նորածնի կյանքի առաջին օրերի ընթացքում:

Նկարագրված գործողությունները նպաստում էին վերին շնչուղիների ընդհանուր առողջացմանը, դրանց բնածին արատների եւ հիվանդությունների անցանկալի հետեւանքներից պաշտպանում: Իրենց գործին նվիրված ազգագրագետները շարունակում են բացահայտել եւ հատիկ-հատիկ հավաքել ժողովրդական բժշկության գոհարները, որոնք մոռացվել են քաղաքակրթության բուռն զարգացման ընթացքում:

Հագուստը

Հագուստը շատ կարևոր է երեխայի առողջության պահպանման համար՝ հատկապես կյանքի առաջին օրերին: Պտղապարկի հարթ եւ փափուկ պատերին հավելուց հետո համեմատաբար ավելի չոր օդային միջավայրում հայտնվելով եւ շփվելով հագուստի կոշտ մակերեսային հետ՝ երեխայի մաշկը նոր զգացողություններ է ապրում: Մաշկը օրգանիզմի սահմանամերձ պաշտպանիչ շերտն է: Մաշկի շոշափողական զգայունությունը օրգանիզմին լրացուցիչ ինֆորմացիա է տալիս շրջապատող միջավայրի մասին՝ նրան պաշտպանելով վնասվածքներից եւ վտանգներից:

Ներսից մարմինը պատված է լորձաթաղանթով, որը մաշկից ավելի նուրբ է, խոնավ եւ փափուկ: Այն ներթափանցում է բոլոր օրգանների մեջ՝ ձեւափոխվելով ըստ կոնկրետ օրգանի ֆունկցիայի: Մաշկն ունի մազածածկույթ, որը մեխանիկական գրգռների շնորհիվ մեծացնում է

նրա զգայունությունը: Մազածածկույթը պաշտպանում է մաշկը վնասումներից՝ հատկապես միմյանց հետ շփվող հատվածներում: Այն փափկախավ խալաթի պես պատում է մարմնի եւ գլխի մաշկը՝ պաշտպանելով օրգանիզմը գերտաքացումից եւ գերսառեցումից: Մազածածկույթն օգնում է մաշկին պահպանել խոնավությունը, թրջվելու դեպքում էլ խոնավության աղբյուր է հանդիսանում մաշկի համար:

Նորածինների օրգանիզմում հեղուկի ներծծումը եւ արտաթորումը կատարվում է ավելի ակտիվ, ուստի նրանց պետք է հազգնել այնպես, որ քրտինքը հեշտ գոլորշիանա

Որքան երեխան փոքր է, այնքան ավելի խիստ պետք է հետեւել այդ կանոնին: Նույն նկատառումներից ելնելով՝ նորածնի սպիտակեղենը պետք է արդուկել փափուկ ծակոտկեն գործվածքը ավելի հեշտ է կլանում եւ դուրս բերում քրտինքը: Քրտինքի հետ երեխան ազատվում է նյութափոխանակության արդյունքում առաջացող «խարամից»: Քրտնաթորման միջոցով երեխայի օրգանիզմը կարգավորում է իր ջերմությունը: Պետք է հիշել, որ փոքրիկները գերտաքացումը գերսառեցումից շատ ավելի ծանր են տանում:

Քրտնազեղծերը նյութափոխանակությունը կարգավորող կարեւոր դեր են կատարում հատկապես նորածինների կյանքում: Թե ժամանակակից, եւ թե միջնադարյան բժշկությունը հաստատում են, որ մաշկը մասնակցում է նյութափոխանակության շղթայում որպես երկվանդների օգնական: Մաշկի միջոցով կատարվում է, այսպես կոչված, «մաշկային շնչառությունը»: Միևնույն ժամանակ, մաշկի բաց ծակոտիների միջով կարող են ներթափանցել ցուրտը եւ ջերմությունը: Ծակոտիների մեծությունը օրգանիզմը կարգավորում է ավտոմատորեն: Օրգանիզմի պաշտպանիչ դրսեւորումներից մեկը մաշկի «իշաքաղումն» է, որն առաջանում է ծակոտիների նեղացման հետեւանքով: Սա էլ իր հերթին պաշտպանում է փոքրիկին գերսառեցումից եւ գերտաքացումից:

Մեր օրերում դեռ կան երեխաների խնամքի ավանդույթներից հետեւող կանայք, որոնցից մեկը Վաղարշապատում բնակվող բնաբույժ տիկին Հայկուշն է: Նա շեշտում է հագուստի կարեւոր դերը կրծքի երեխաներին բազմաթիվ հիվանդություններից զերծ պահելու հարցում: Իր քաղաքում նա հայտնի է՝ որպես նորածինների հիվանդությունների, մասնավորապես՝ նորածնի տղաների ֆիմոզի եւ դրա բարդությունների բուժման գիտակ: Պարզ եւ իմաստուն խորհուրդներով նա օգնել է երեխաների մի քանի սերունդների ընդմիջտ ազատվել ոչ միայն ֆիմոզից եւ դրա բազմաթիվ վտանգավոր բարդություններից, այլեւ առաջացման պատճառներից: Մինչդեռ ժամանակակից բժշկությունը ֆիմոզի խնդիրը լուծում է վիրաբուժական միջամտությամբ՝ մեխանիկորեն լայնացնելով առնանդամի գլխիկի մաշկի անցքը եւ հեռացնելով կուտակված աղերը: Դժբախտաբար, դա չի լուծում երեխայի առողջության հարցը, քանի որ վերացնում է միայն հիվանդության հետեւանքը, այլ ոչ թե այն առաջացնող պատճառը:

Տիկին Հայկուշը պնդում է, որ ֆիմոզը ջրաաղային փոխանակման խանգարման հետեւանք է: Որպես կանոն, դա տեղի է ունենում մաշկի ծակոտիներից քրտինքի արտաթորման եւ նյութափոխանակության խանգարման պատճառով: Վերջինիս հետեւանքով դժվարանում է նյութափոխանակության արգասիքների հեռացումն օրգանիզմից: Միզաթթվային աղերի

գերկուտակման հետեւանով երեխան թունավորվում է իր իսկ նյութափոխանակման արգասիքներով: Փոքր տարիքի տղաների առնանդամի գլխիկը ծածկող մաշկի ծալքերում առաջանում են աղային կուտակումներ, որոնք դժվարացնում են միզարձակումը, առաջացնում են տեղային գրգռվածություն եւ հյուսվածքների բորբոքում:

Սեփական նյութափոխանակության արգասիքներով թունավորվելու հետեւանքով երեխաները կարող են դառնալ անհանգիստ եւ դյուրագրգռ: Հաճախ դա դրսեւորվում է մարմնի ջերմաստիճանի բարձրացմամբ, հաճախակի հարբուխներով եւ դրանց բարդություններով: Որպես կանոն, այդ վիճակները ուղեկցվում են մարտողության խանգարումներով, գազերի կուտակմամբ, իրար հաջորդող փորկապությամբ եւ փորլուծությամբ: Նյութափոխանակության խանգարումների պատճառով քիթը հաճախ փակվում է, դժվարանում է շնչառությունը, քթից են աչքերից առատ արտադրություն է նկատվում, քթանցքների մեջ գոյանում են կեղեւներ:

Ես ականատես եմ եղել, թե ինչպես են նորածինները արագ ապաքինվել՝ հագուստի հարցում տիկին Հայկուշի խորհուրդները կիրառելու շնորհիվ: Այդ խորհուրդները բավականին պարզ են: Երեխային պետք է հազգնել բամբակյա գործվածքից կարված ընդարձակ շապիկ՝ առջեւի ամբողջական բացվածքով եւ վրաբերվող կապովի եզրերով: Փոքրիկին կարելի է հազգնել պատրաստի փամփերս կամ ինքնուրույն պատրաստված տակաշորե վարտիք:

Ցուրտ ժամանակ շապիկի վրայից կարելի է հազգնել բամբակյա կամ բրդյա գործած ժակետ, որի ծակոտիներից քրտինքը հեշտությամբ կգոլորշիանա: Եթե ավելի տաք պահելու կարիք կա, ապա կարելի է վրայից նոսր գործվածքով ժակետ հազգնել: Ցուրտ կամ քամոտ եղանակին երեխային դուրս տանելիս՝ պետք է տան հագուստի վրայից հազգնել խիտ գործվածքից կարված տաք հագուստ:

Փոքրիկը, նույնիսկ տանը գտնվելով, շատ զգայուն է եղանակային կտրուկ փոփոխությունների նկատմամբ: Եղանակի հետ պետք է փոխել նաեւ երեխայի հագուստը: Եթե դրսում քամոտ ցուրտ եղանակ է, ապա տանը երեխային պետք է մի քիչ ավելի տաք հազգնել եւ հետեւել, որ նա օդի հոսանքի տակ չընկնի: Պետք է հաշվի առնել, որ երեխաներն իրենց ցածր հասակի պատճառով գտնվում են սենյակի ստորին հատվածներում, որտեղ օդը համեմատաբար ավելի սառն է, իսկ օդի հոսանքները՝ ավելի արտահայտված:

Հղիների եւ կերակրող մայրերի սնունդը

Ներարգանդային կյանքում պտուղը զարգանում եւ սնվում է պրոտալարի միջոցով մոր արյան սննդանյութերի հաշվին: Ծնվելուց հետո երեխան նույնպես սնունդը ստանում է մորից, սակայն արդեն մայրական կաթի միջոցով: Դեռեւս ներարգանդային կյանքում պտղի մարտողական օրգանները նախապատրաստվում են ընտելանում են այն սննդին, որն օգտագործում է իր մայրը: Այդ նույն ընտելացումը շարունակվում է կրծքով կերակրվելու շրջանում: Փոքրիկի օրգանիզմը կառուցվում է մոր օրգանիզմի հաշվին, հետեւաբար երեխայի առողջությունը մեծապես կախված է մոր առողջությունից: Այդ իսկ պատճառով կերակրող մայրերը պետք է շատ ուշադիր լինեն իրենց սննդի հարցում եւ հաշվի առնեն, որ այն, ինչ վնասակար է իրենց համար, շատ անգամ ավելի վնա-

սակար է պտղի եւ նորածնի համար:

Կրծքի երեխայի հիվանդության պատճառն առաջին հերթին փնտրի կերակրող մոր օրգանիզմում: Բուժի մորը, եւ երեխան կլավանա ինքն իրեն:

Հիպոկրատ

Եթե կերակրող մայրն օգտագործի դժվարամարս սնունդ, ապա նորածինը կունենա մարտողության խնդիրներ: Երիտասարդ մայրերը պետք է իմանան, որ բերանի խոռոչում սնունդը մանրացվելուց բացի նաեւ ախտահանվում է՝ անցնելով քիմքային նշիկների (այսպես կոչված, գլանդների) միջեւ, որոնք արտազատում են պաշտպանիչ իմունային մարմնիկներով հարուստ լիմֆոիդ հեղուկ: Կերակրող մոր մարտողությունից մեծապես կախված է նրա առողջությունը, կաթի որակը, հետեւաբար եւ երեխայի առողջությունը:

Ըստ միջնադարյան բժիշկների՝ դուրսամարս սնունդը բարելավում է կերակրող մոր կաթի որակը

Օգտակար է բուսական սնունդը. ցորենից պատրաստված կերակուրները, սննդային վայրի խոտաբույսերը (թրթնջուկը, ծնեբեկը, դանդուռը), գարու եփուկը, ընկույզը, քաղցրահամ նուշը, սամիթի սերմի եփուկը, հում եւ խորոված մրգերը (սերկեիլը, խնձորը, տանը), եւ բանջարեղենը (սմբուկը, գագարը, սոխը): Հղիներին եւ կերակրող մայրերին օգտակար են չափավոր ֆիզիկական վարժությունները եւ զբոսանքները մաքուր օդում: Կաթի որակի վրա վատ են անդրադառնում մրսածության հիվանդությունները, աղիքային խանգարումները, թունավորումները, ուժեղ աղեղնության դեղերի եւ թունավոր նյութերի (ալկոհոլ, նիկոտին), կծու եւ աղի սննդի, մանանեխի, հում սոխի եւ սխտորի չափից ավելի օգտագործումը:

Հղիության եւ կրծքով կերակրման շրջանում ցանկալի է սահմանափակել դժվարամարս մսեղենի եւ ձկնեղենի (ծխեցված կամ ապխտած) օգտագործումը: Գերադասելի են խաշած բջճամիսը, ձկնեղենը, ինչպես նաեւ ձու եւ մատղաշ կենդանիների միսը: Կաթնարտադրության եւ կաթի որակի վրա վատ է անդրադառնում նաեւ կերակրող մոր վատ տրամադրությունը:

Հնում բժիշկները համարում էին, որ մոր սեռական կյանքը նույնպես վատ է անդրադառնում պտղի առողջության, ինչպես նաեւ կերակրող մոր կաթի որակի վրա: Այդ իսկ պատճառով արգելվում էին սեռական հարաբերությունները կերակրող մոր եւ հղի կնոջ հետ: Մնացած բոլոր կաթնասունները կյանքի այդ ժամանակահատվածում չեն զուգավորվում: Հղի կանանց խորհուրդ չի տրվում կրել բարձրակրունկ կոշիկներ, քանի որ դրանք խաթարում են կնոջ կեցվածքը, ինչը կարող է հանգեցնել ողնաշարի կորացմանը: Դա իր հերթին բացասաբար է ազդում ոչ միայն պտղի զարգացման, այլեւ մոր առողջության վրա:

Հղիության երկրորդ կեսին բժիշկները խորհուրդ են տալիս սահմանափակել հեղուկի օգտագործումը, որպեսզի պտղաջրերը չափից ավելի չշատանան, չճնշեն պտղին եւ չառաջացնեն հղի կնոջ վերջույթների այտուցներ: Հեղուկի պահանջը կարելի է մասամբ բավարարել օրվա մեջ հաճախակի ցնցուղ ընդունելով, որը առավել լավ է հազգնում ծարավը տարվա տաք եղանակին:

(շարունակելի)

Սուրեն ԳՅՈՒԼԻԱՍՅԱՆ,
քիթ-կոկորդ-ականջաբան,
բժշկական գիտությունների
թեկնածու



Մարդը եւ հանդուրժողականությունը

Հողագնդի վրա ամեն գեղեցիկը արելից է, ամեն լավը՝ մարդուց: Միխայիլ Պրիշվին

Ժամանակակից աշխարհը բնութագրվում է բազմազանությամբ եւ միջնակուսային ընդլայնվող հաղորդակցությամբ: Որքան ավելի բազմազան է դառնում աշխարհը, այնքան ավելի են մարդիկ առնչվում սովորույթներով եւ մտածելակերպով իրենցից տարբեր անհատների եւ խմբերի հետ: Այս տարբերությունները կարող են ուրիշներից սովորելու հնարավորություն հանդիսանալ, բայց կարող են նաեւ կոնֆլիկտներ հարուցել:

Հանդուրժողականությունն այն արժեքն է, որի միջոցով հնարավոր է գնահատել աշխարհի բազմազանությունը եւ սովորել ուրիշներից: Հանդուրժողականությունը հաճախ ճանաչվում է համբերատարությամբ, սակայն սրանք երկու տարբեր բաներ են: Ի տարբերություն համբերատարության, հանդուրժողականությունը ընդգծում է տարբեր լինելու եւ այդ տարբերությունների ճանաչված եւ գնահատված լինելու իրավունքը: Հանդուրժողականության կենսագործումը ենթադրում է երկխոսության ծավալում, որը մոտեցնում է մեզ եւ խթանում «Ուրիշի» մասին մեր ընկալումը:

Հանդուրժողականության վերաբերյալ սկզբունքների մասին հռչակագիրը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունվել է 1995թ.-ին, ամրագրում է, որ հանդուրժողականությունը հարգանքն է մեր աշխարհի մշակույթների հարուստ բազմազանության, մեր արտահայտման ձևերի եւ մարդ լինելու կերպարի նկատմամբ:

Հանդուրժողականությունը հիմնված է «Մարդկային բազմազանությունը հարստացնում է հասարակությունը» կարգախոսի վրա:

Ժամանակակից հասարակությունում հանդուրժողականության ուսուցանումը առանցքային տեղ ունի, քանի որ ժողովրդավարության զարգացումն անհնար է՝ առանց հանդուրժող անհատի եւ հանդուրժող հասարակության:

Հանդուրժողականության գաղափարը առանցքային տեղ ունի փիլիսոփայական տեսություններում: Հանդուրժողականության մասին խոսել են 17-րդ դարի անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկը իր «Ակնարկներ հանդուրժողականության մասին» եւ նույն շրջանի ֆրանսիացի փիլիսոփա Պիեռ Բեյլը իր «Նամակներ հանդուրժողականության մասին» աշխատություններում: Պատմականորեն հանդուրժողականության խնդիրը սրությամբ դրվել է 30-ամյա պատերազմից հետո (1618-1648թթ.): Նշեն, որ այդ պատերազմի ընթացքում բախվող երկու կրոնական ուղղությունների ներկայացուցիչները կաթոլիկները եւ բողոքականները, դաժան հաշվեհարդար տեսան իրար նկատմամբ:

Հանդուրժողականության հիմնախնդիրը բխում է մարդկանց սեռային, ռասայական, ազգային, տարիքային, մտածողական, զգայական, արժեքային տարբերություններից: Ամբողջատիրական հասարակարգերում հանդուրժողականության խնդիր գոյություն չունի, քանի որ իշխանությունը սահմանափակում է մարդկանց անհատականությունը եւ դաժան հաշվեհարդար է տեսնում այլախոհության ցանկացած դրսևորման նկատմամբ՝ դրանով պարտադրելով կեղծ հանդուրժողականություն: Արդյունքում, մարդկանց ճնշող մեծամասնությունը մտածում ու գործում է միատեսակ: Ամբողջատիրական հասարակարգը անհանդուրժողական է պարտադրված նորմերից ցանկացած շեղման նկատմամբ:

Ժողովրդավարական հասարակարգում ավելի մեծ հնարավորություններ են ստեղծվում մարդկանց անհատականության դրսևորման համար: Սա նշանակում է, որ մարդկանց տարբերություններն ավելի ակնհայտ են դառնում: Մյուս կողմից կապի միջոցների զարգացման արդյունքում ընդլայնվում են ազգամիջյան շփումները: Մարդիկ ավելի հաճախ են փոխում իրենց բնական վայրը, այցելում այլ երկրներ, հան-

դիպում օտարերկրացիների: Այդ հանդիպումների ընթացքում դրսևորվում են մարդկանց ավանդույթների, սովորույթների, արժեքների, մտածելակերպի տարբերությունները: Մարդկանց անհատականության ու ազգային ինքնության վրա հիմնված տարբերությունները կարող են նպաստել զարգացմանը, թե դրսևորվի հանդուրժողականություն:

Շատ կարեւոր է այն հարցը, թե հանդուրժողականությունը սահման ունի, թե ոչ: Այսինքն արդյոք կարելի է ամեն ինչ հանդուրժել: Իհարկե՝ ոչ: Բայց ո՞րն է հանդուրժողականության սահմանը, ինչպես է այն որոշվում: Ճիշտ չէ կարծել, թե անհատներն են որոշում հանդուրժողականության սահմանը, քանի որ այդ դեպքում իշխանավորները, ազդեցիկ մարդիկ կամայականություն կորստելու են հանդուրժելով իրենց համար ընդունելի, չհանդուրժելով անընդունելի:

Դրա համար հանդուրժողականության սահմանը որոշվում է օրենքներով: Այսինքն պետք է հանդուրժել, աջակցություն ստանալ այն ամենը, ինչը օրենքով թույլատրելի է, ինչը մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների շրջանակներում է: Փոխարենն անհանդուրժելի է այդ իրավունքների եւ ազատությունների ոտնահարումը: Իհարկե, լինում են դեպքեր, երբ առանձին մարդկանց համար անհանդուրժելի երեւույթները օրենքով համարվում են հանդուրժելի: Այս դեպքում անձնային անհանդուրժողականությունը բախվում է իրավական հանդուրժողականությանը: Օրինակ՝ մարդը կարող է անհատապես չհանդուրժել տարբեր կրոնական ուղղությունների գոյությունը, բայց իրավունքի տեսանկյունից տարբեր կրոնական ուղղությունների առկայությունը հանդուրժելի է: Բնականաբար, երկրորդը գերիշխող դեր ունի: Հանդուրժողականության եւ անհանդուրժողականության միջեւ ընտրությունը առավել բարդ է, երբ բախվում են ազգային ավանդույթները եւ օրենքը: Այս խնդիրը հատկապես հրատապ է Հայաստանի նման երկրների համար: Շատ դեպքերում մեր ավանդույթները ազգային ինքնությունը պահելու լավագույն միջոցն են: Բայց կան ավանդույթներ էլ, որոնք իրենց դարձնում են արդեն:

Հանդուրժողականությունը պետք է դրսևորեն հատկապես պետական, հասարակական-քաղաքական գործիչները: Բանն այն է, որ նրանց գործողությունները, որոշումները (ի տարբերություն շարքային քաղաքացիների) ազդում են ամբողջ հասարակության վրա: Հետեւաբար, նրանք պետք է ավելի հանդուրժող լինեն մամուլի եւ հասարակության քննադատական մոտեցումների նկատմամբ: Հանդուրժողականության եւ անհանդուրժողականության միջեւ ընտրության խնդիրը առանձնակի սրությամբ չի դրվի, եթե մարդիկ իրենց վարքագծում լինեն չափավոր, օրինապահ:

Չափավորությունն ընդունենք որպես սեփական արելիքների նորմ, հանդուրժողականությունը որպես վերաբերմունք ուրիշների նկատմամբ: Հանդուրժողականությունն ընդունենք որպես այլ մշակույթ եւ ուրիշներին ճանաչելու ու հարգելու միջոց, իսկ չափավորությունը որպես հակադրություն չառաջացնելու միջոց: Եթե չափավորությունն ու հանդուրժողականությունը չհամատեղվեն, ապա մարդկությունը անլուծելի խնդիրների կբախվի:

Այս ամենից հետո եկեք փորձենք հասկանալ, թե ինչ տարբերություններ կան հանդուրժողականության եւ անհանդուրժողականության միջեւ:

«Հանդուրժել» կարող է նշանակել լինել անտարբեր, «յուր գնալ», ունենալ չեզոք դիրք (որոշում), ինչպես նաեւ նշանակում է ճանաչել եւ հարգել մշակութային նորմերը, ուրիշներին շնորհված իրավունքները եւ ազատությունները:

«Չհանդուրժել» կարող է նշանակել վիրավորել, լինել կոպիտ, արտահայտել եսասիրություն, գործադրել բռնություն, ֆիզիկապես ոչնչացնել: Անհանդուրժող վարքից պետք է պաշտպանված լինել նաեւ օրենք-

ներով, որոնք ապահովում են մարդու իրավունքներ բոլորի համար, ինչպես նաեւ հիմք ստեղծում հարգաբեքի եւ արժանապատվության համար:

Մի բան պետք է լավ գիտակցել, որ փոխադարձ անհանդուրժողականությունը բերում է կոնֆլիկտ: Կոնֆլիկտները մեր կյանքի անբաժանելի մասն են կազմում: Դրանք առկա են ամենուր՝ ընտանիքում, դպրոցում, խանութում... Թերեւս չկա մեկը, որը մեր քաղաքակրթության չլինի կոնֆլիկտի մեջ: Մենք կարող ենք կոնֆլիկտներ ունենալ ինչպես մեզ ծանոթ մարդկանց հետ, այնպես էլ՝ անծանոթների: Կոնֆլիկտները կարող են խաթարել մարդկանց փոխհարաբերությունները, առաջացնել լարվածություն եւ ցնցումներ: Դրանք կարող են նաեւ բռնության, պատերազմների պատճառ դառնալ: Ձարմանալի չէ, որ մարդիկ հիմնականում խուսափում են վախենում են կոնֆլիկտներից: Միայն 20-րդ դարում երկու համաշխարհային եւ ավելի քան 200 լայնածավալ պատերազմներն ու կոնֆլիկտները մոտ 300 միլիոն մարդկային կյանք խլեցին: Պատասխանը մեկն է՝ անհանդուրժողականություն, խտրականություն, անտարբերություն: Իսկ կարո՞ղ է, արդյոք, նույնը կրկնվել հիմա:

20-րդ դարի ողբերգություններից անցել են տասնյակ տարիներ, բայց արդի՝ գլոբալիզացիայի եւ ինտեգրման ժամանակաշրջանում շատ երկրներում նորից առաջանում են նույնպիսի խնդիրներ՝ օտարացում, անհանդուրժողականություն, այլախոհների եւ այլակերպերի նկատմամբ: Անգամ միջազգային կառույցներից շատերը հանգիստ են վերաբերվում կատարվածին չհասկանալով վերահաս վտանգը: Եթե նույնիսկ մենք ինքներս չենք մասնակցում ոչ մեզ նմանների խոշտանգումներին, մեր անտարբերությամբ նպաստում ենք դրան:

